

„ՅԱԻԵԼՈՒԱԾ“ „ԱՐԱՔՍ“ ՀԱՆԴԻՍԻ

Ն. ԳՕԳՕՆ՝

ՎԱՂԵՄԻ

Կ Ա Լ Ո Ւ Ա Ծ Ա Տ Է Ր Ե Ր

ԹԱՐԳ. Յ. ԱԹԱՆԱՍԵԱՆՅ



ՎԱՂԵՍԻ ԿԱՆՈՒԱԾԱՏԵՐԵՐԸ

Ես շատ եմ սիրում այն առանձնացած զիւղատէրերի համեստ կեանքը, որոնք Մալօրօսիայում սովորաբար հինաւորաց մարդկանց անուն ունին և որոնք քայքայուած նկարչական անակների նման լաւ են իրենց պարզութեամբ և կատարեալ հակապատկերութեամբ մի նոր կոկիկ շէնքի հետ, որի պատերը դեռ ևս չեն փաստուել անձրևից, կտուրները չեն ծածկուել կանաչ մամուռով և սուաղից դուրի պատշգամբը դեռ ևս չէ երևացնում իր կարմիր աղիւսները: Ես երբեք սիրում եմ մտնել կարճ ժամանակով այդ տարօրինակ միայնակեաց կեանքի մթնոլորտը, որտեղ ոչ մի ցանկութիւն դուրս չէ թուում փոքրիկ բազր շրջապատող ցանկապատից, խնձորիներով ու սալորիներով լի այգու պարսպից, նրան շրջապատող թեքուած զիւղական խրճիթներից, որոնք հովանաւորուած են ուռիներով, թանթրվենիներով և խնձորիներով: Այդ համեստ կալուածատէրերի կեանքը այնքան խաղաղ է, այնքան խաղաղ, որ մի բոպէի չափ մոռացութեան մէջ ես ընկնում և կարծում ես, որ կիրք, ցանկութիւն և չար ողուց թելադրուած ամեն մի չար մտածմունք, որ զգուցնում է կեանքը, զոյութիւն չունի ամենեւին և թէ դու տեսել ես այդ ամենը միմեայն փայլուն և զեղեցիկ երազիդ մէջ:

Ես տեսնում եմ այստեղից ցածր անակը իր փոքրիկ սեւացած փայտեայ սիւններով շինուած ծածքով, որ շրջապատում է ամբողջ տունը, որպէս զի կայծակի և կարկառի ժամանակ կարելի լինի փակել լուսամուտները առանց թրջուելու. տեսնում եմ նրա ետեւում հոտաւէտ չէրէմուխան, ամբողջ

շարքեր կարճիկ մրդատու ծառերի խեղդուած կարմրութեան մէջ կորած բալենիներից, հասունութիւնից ղեղնած ու կարմրատակած սալորներից, տեսնում եմ իր ամեն կողմը տարածուած ձիւղերով թխկնին, որի շուտքի տակ գցուած է դորզը հանդիստ առնելու համար. տեսնում եմ տան առաջին՝ կարճիկ թարմ կանաչով ծածկուած ընդարձակ բազը, որի վրայի փոքրիկ շաւիղը տանում է շտեմարանից մինչև խոհանոցը և խոհանոցից մինչև պարոնների օթեանը. տեսնում եմ երկայնավիւ սաղին, որ իրեն փոքրիկ զույլ նման քնքոյշ ձաղերի հետ ջուր է խմում. տեսնում եմ ցանկապատը, զարդարած խնձորների և տանձերի շարաններով և բեռնաւորուած դորզերով. տեսնում եմ սեխով լի սայլը, կանգնեցրած շտեմարանի մօտ, լծի եզը, որ ծուլութեամբ մեկնուել է սայլի կողքին: Այս բոլորն ինձ համար ունի մի անբացատրելի հրապոյր. դույց է հէնց այն պատճառով, որ ես այլ ևս չեմ տեսնում նրանց և որ մեզ համար սիրելի է այն ամէնը, որոնցից մենք անջատուած ենք: Ինչ որ էլ լինէր, բայց մինչև անգամ այն ժամանակ, երբ իմ կառքս մօտենում էր այդ տնակին, հոգիս ընդունում էր զարմանալի ախորժ և հանդիստ զրութիւն. ձիւրը ուրախ թռչնում էին գէպի դուռը, կառապանը հանդիստ կերպով իջնում էր կառքից և լցնում իր չիբուխը, կարծես թէ, նա եկած լինէր իր սեպհական տունը. նոյն իսկ հաչոցը, որ բարձրացում էին դանդաղ դամբուները, փոքրիկ շները և սև շնիկները, ախորժելի էր իմ ականջներին:

Բայց ամենից աւելի ինձ դուր էին գալիս իրենք այդ խաղաղ անկիւնների տէրերը, ծերունիները և պառաւանները, որոնք առանձին հոգացողութեամբ էին դուրս դալիս մարդու զխմաւորելու: Նրանց գէմքերը հէնց այժմ էլ պատկերանում են իմ առաջ, երբեմն աղմուկի և նորաձև ֆրակների ամբոխի մէջ և այն ժամանակ յանկարծ ինձ վրայ մի ապշութիւն է տիրում և անցեալը նորոգվում է: Նրանց գէմքերի վրայ միշտ դրուած է այնպիսի բարութիւն, այնպիսի բարեհոգութիւն ու ազնուութիւն, որ ակամայից հրաժարվում ես, գէթ դոնէ կարճ ժամանակով, քո բոլոր համարձակ մտածմունքներից և ան-

նկատելի կերպով քո բոլոր զգացմունքներովդ փոխադրվում ես դէպի ստոր հովուական կեանքը:

Նս մինչև այժմն էլ չեմ կարող մոռանալ անցեալ դարու երկու ծերունիներին, որոնք, ափսոս, այժմ այլ ևս չը կան, բայց իմ հոգիս դեռ ևս մինչև այժմ լի է ցաւակցութեամբ և իմ զգացմունքներս զարմանալի կերպով ճրնշվում են, երբ որ երեւակայում եմ, որ մի ժամանակ կը դամ նորից նրանց նախկին, այժմ դադարկացած, կայարանը և կը տեսնեմ աւերակ խրճիթների մի հաւաքածու, ցամաքած ջրամբարը, կանաչին տուող փոսը հէնց այնտեղ, որտեղ կանգնած էր ցածիկի անտիլը և ուրիշ ոչինչ: Տխուր է, առաջուց տխուր է ինձ համար: Բայց դառնանք դէպի պատմութիւնը:

Աֆանասի Իվանովիչ Տովստոգուբը և նրա ինը Պոյլխէրիա Իվանովնա Տովստոգուբիսան, շրջակայ ռամիկների (մուժիկների) ասելով՝ այն ծերունիներն էին, որոնց մասին ես սկսեցի պատմել: Եթէ ես նկարիչ լինէի և ուզէնայի քաթանի վրայ նկարել Ֆիլէմոնին և Բաւկիդին, ես երբէք ուրիշ ոչ մի օրինակ չէի ընտրել, բացի նրանցից: Աֆանասի Իվանովիչը վաթսուն տարեկան էր, իսկ Պոյլխէրիա Իվանովնան յիսուն և հինգ: Աֆանասի Իվանովիչը բարձրահասակ էր, ման էր դալիս միշտ բրդով ծածկուած և ոչխարէ մորթուց կարած մուշտակով, նստում էր կռացած և համարեա թէ միշտ ժպտում էր, թէև անգամ մի բան պատմելիս լինէր կամ թէ հէնց մինչև անգամ լսելիս: Պոյլխէրիա Իվանովնան փոքր ինչ լուրջ էր, համարեա՝ երբէք չէր ծիծաղում, բայց նրա դէմքի վրայ և աչքերում կար այնքան բարուծիւն, այնքան պատրաստականութիւն հիւրասիրել ձեզ այն ամեն բանով, ինչ որ նրանց մօտ լաւ բան կար, որ դուք, երեւի, նրա բարի դէմքի համար ժպիտը արդէն չափից դուրս աւելորդ բան կը համարէիք: Նրանց դէմքի կնճիռները թեթեւ դասաւորուած էին այնպիսի դիւրական ձևով, որ նկարիչը անպատճառ կ'օգտուէր դրոշմից իր պատկերի համար: Այդ կնճիռներից ասես, կարելի էր կարգալ նրանց ամբողջ կեանքը, պարզ խաղաղ կեանքը, որ վարում էին ազգային հին, պարզասիրտ և մինեոյն ժամա-

նակ հարուստ ազգատոհմերը, որոնք միշտ հակապատկեր են ներկայանում այն ստոր մալօրօսներին, որոնք մորեխի նման լցուած են լինում ատենական տեղերը և պալատները, և նոյն իսկ իրենց երկրացիներից խլում են վերջին կոպէկը, հեղեղի նման լցնում են Պետերբուրգը բանասարկուներով, վերջապէս ձեռք են բերում մեծ հարստութիւն և հանդիսաւոր կերպով աւելացնում են իրանց «օ» վերջաւորուող ազգանունը «վ» տաւր: Ոչ նրանք ինչպէս և բոլոր Մալօրօսիայի չին և արմատական ազգատոհմերը նման չէին այդ անարգ և ստոր արարածներին:

Ձէր կարելի սառնասրտութեամբ նայել նրանց փոխադարձ սիրոյ վրայ, նրանք երբէք միմեանց «դու» չէին ասում, այլ միշտ «դուք».— դուք, Աֆանասի Իվանովիչ, դուք, Պոյլիսէրիա Իվանովնա:

— Այդ դձուք սխմեցիք աթոռը, Աֆանասի Իվանովիչ:

— Ոչինչ, մի բարկանաք, Պոյլիսէրիա Իվանովնա, այո, այդ ևս արեցի:

Նրանք երբէք որդի չէին ունեցել և այդ պատճառով նրանց բոլոր սէրը կենարօնանում էր հէնց միմեանց վրայ: Մի ժամանակ, երիտասարդ հասակում, Աֆանասի Իվանովիչը ծառայելիս է, եղել իբրև զինուոր, յետոյ եղել է սեկունդմայօր, բայց այդ շատ վաղուց է եղել, արդէն անցել է, այդ մասին արդէն ինքը Աֆանասի Իվանովիչը համարեա երբէք ոչինչ չէր յիշում: Աֆանասի Իվանովիչը ամուսնացաւ երեսուն տարեկան հասակում, երբ երիտասարդ էր և հաղնում էր կապայ, նա մինչև անգամ բաւական ճարպիկ կերպով փախցրեց Պոյլիսէրիա Իվանովնային, որին ազդականները չէին ուղղում տալ նրան, բայց այդ բանի մասին էլ նա արդէն շատ քիչ էր յիշում, զոնէ երբէք չէր խօսում:

Բոլոր այս անցեալ արտասովոր անցքերին փոխարինել էր խաղաղ և միայնակեաց կեանքը, այն թմրեցուցիչ և միևնոյն ժամանակ ներդաշնակ տեսիլքները, որ դուք զգում էք, նստած դէպի այգին նայող զիւղական պատշգամբում, երբ որ ախորժելի անձրևը հիանալի կերպով շառաչում է ծա-

ռերի տերէններին կպչելով, կարկաչահոս առուակներ կազմելով և թմրութիւն բերելով ձեր բոլոր անդամների վրայ, այն ինչ աղեղը՝ թագնուած ծառերի ետեւից, զաղտազոզի բարձրանալով կիսակործան կամարի ձեռով լուսաւորում է երկնքում՝ եօթը դոյներով, կամ երբոր օրօրում է ձեզ կանաչ թփերի միջում կուլ դնացած ձեր կառքը, իսկ զաշտի լորը որոտում է և հոտաւէտ խոտերը, ցորնի հասկերի և զաշտային ծաղիկների հետ 'ի միասին, մանուկ են ձեր փակ կառքի դռնակից ներս ախորժելի կերպով շփուելով ձեր ձեռքերին ու երեսին:

Նա միշտ քաղցր ժպիտով լսում էր իր սօտ եկող հիւրերին, երբեմն ինքն էլ էր խօսում, բայց աւելի շատ հարցեր էր տալիս: Նա չէր պատկանում այն մի կարգ ծերունիներին, որոնք զզուեցնում են մարդու շարունակ հին ժամանակը զովասանելով կամ նորը վատաբանելով. նա ընդհակառակը՝ ձեզ հարցեր տալով, մեծ հետաքրքրութիւն և մասնակցութիւն էր ցոյց տալիս դէպի ձեր անձնական կեանքի հանդամանքները, յաջողութիւններն ու անյաջողութիւնները, որոնցով սովորաբար հետաքրքիր են լինում համարեա բոլոր բարի ծերունիները, թէև այդ բանը նմանում է փոքր ինչ անմեղ երեխայի հետաքրքրութեանը, որ ձեզ հետ խօսելու ժամանակ, զննում է ձեր ժամացոյցի շղթան: Այդ ժամանակ նրա դէմքը, կարելի է ասել, բարութիւն էր արտաշնչում:

Այն տնակի սենեակները, որի մէջ բնակվում էին մեր ալեւորները, մանր ու ցածր էին, ինչպէս սովորաբար լինում են հինաւուրց մարդկանց մօտ. իւրաքանչիւր սենեակում կար մի ահագին վառարան, որ բռնում էր նրա համարեա մի երրորդ մասը: Այդ սենեակները սարսափելի տաք էին, որովհետև թէ Աֆանասի Իվանովիչը և թէ Պոլլիէրիա Իվանովնան տաք շատ էին սիրում: Վառարանների բոլոր դռները դարձրած էին դէպի նախասենեակը, վառարանները համարեա մինչև առաստաղը լքցվում էին ծղօտով, որը սովորաբար Մալօրօսախյում դործ են ածում փայտի տեղ: Այդ

վառուող ծղօտի ճայթիւնը և լոյսը ձմեռնային երեկոներին չափազանց աստիճանի են դարձնում նախասենեակը, երբ որ վառվռուն երիտասարդութիւնը, յոգնած սեւաչեայ աղջիկների յետ ընկնելուց վազում է այնտեղ, ձեռքերն միմեանց խփելով: Սենեակի պատերը զարդարուած էին մի քանի փոքր ու մեծ պատկերներով, հին ու նեղ շրջանակների մէջ դրուած: Ես հաւատացած եմ, որ նրանց տէրերը իրենք էլ արդէն վաղուց մոռացել էին նրանց բովանդակութիւնը և եթէ պատկերներից մի քանիսը դուրս տարուէին, նրանք գուցէ այդ բանը չը նկատէին: Երկու պատկերը մեծ էին և ձիթանկար, մէկը ներկայացնում էր մի եպիսկոպոսի, միւսը Պետրոս Գին, նեղ շրջանակների միջից նայում էր ճանճերից ակառտած զբաղւիւհէրը: Լուսամուտաների շուրջը և դռների վերեւում դանվում էին խիստ բազմաթիւ փոքրազիւր նկարներ, որոնց յաճախ տեսնելով սովորութիւն ես դարձնում բծեր համարել պատերի վրայ և դրա համար նրանց ամենեւին չես էլ նշմարում: Յատուկ համարեա բոլոր սենեակներում հոգից էր, բայց այնպէս մաքուր կոխած էր՝ և պահվում նա այնպիսի մաքրութեամբ, որ դժուար թէ պահուելիս լինի հարուստ տան որ և է մի պարկէտը, որը սրբում է դանդաղաբար քնհաս ծառան:

Պոլլէրիա Իվանովնայի սենեակը ամբողջապէս դարսուած էր սնտուկներով, արկղներով և աւելի փոքր սնտուկներով: Բազմաթիւ կապոյցներ և տոպրակներ, ծաղկի, բանջարանոցի, ձմերուկի սերմերով քարշ էին արած պատերից: Գոյնզոյն բրթի բազմաթիւ կծիկները, հին շորերի կտորասանքը, որոնք կարուած էին մի կէս դար առաջ, դարսուած էին սնտուկների անկիւններում ու մէջերքում: Պոլլէրիա Իվանովնան խիստ տնտրար կին էր և հաւաքում էր ամեն ինչ, թէև երբեմն ինքն էլ չէր իմանում թէ յետոյ ինչ բանի պէտք կը դան այդ բաները:

Բայց ամենից նշանաւորը տան մէջ երգող դռներն էին: Հէնց որ լուսանում էր թէ չէ, դռների երգեցողութիւնը լսվում էր ամբողջ տան մէջ: Ես չեմ կարող ասել, թէ ինչն էր, որ

նրանք երգում էին: Ժանգոտած օղակներն էին մեղաւոր, թէ նոյն իսկ նրանց շինող արհեստաւորն էր ծածկել նրանց մէջ մի զաղտնիք, բայց նշանաւորն այն էր, որ իւրաքանչիւր դուռը ունէր իր առանձին ձայնը. դէպի ննջարան տանող դուռը երգում էր շատ բարակ ու սուր ձայնով. դէպի ճաշարան տանող դուռը շատ կոշտ ձայն էր հանում, բայց այն դուռը, որ նախասենեակումն էր, մի առանձին օտարոտի, թռթռալից և միւսնոյն ժամանակ արտասուալի ձայն ունէր, այնպէս որ ուշադրութեամբ ականջ դնելիս վերջապէս պարզ կարելի էր լսել. «այ մարդիկ, ախր ես մըսում եմ»: Ես դիտեմ, որ շատերին դուր չէ դալիս այդ ձայնը, բայց այդ ես շատ եմ սիրում, և եթէ ես պատահմամբ լսեմ այստեղ դռան ճռճոց, այն ժամանակ յանկարծ կը մտաբերեմ դիւղը իր ցածիկ սենեակով, լուսաւորուած Հնադարեան աշտանակի վրայ կայրած ճրագով՝ կը մտաբերեմ սեղանի վրայ պատրաստի ընթրիքը, մայիսեան մութ դիշերը, որ երեւում է պզտում բաց արած լուսամտաւ միջով, սեղանի վրայ դարստած ափսէները, սոխակը, որի դայլալեքները հնչում են ամբողջ տան ու այգու մէջ և հեռաւոր դեպի վրայ. երկիւղն ու տերեւների սոսափիւնը... և, Տէր իմ Աստուած, յիշողութիւնների որքան երկար շարքեր են արթնանում մտքիս մէջ:

Սենեակի աթոռները փայտից էին և ամրակուռ, որոնցով սովորաբար զանաղանվում է հին ժամանակը. նրանք բոլորը իսկական մեծութեամբ տաշած բարձր մէջքի անդեր ունէին առանց լաքի կամ ներկի. նրանց երեսը մինչև անգամ ծածկուած չէր ոչ մի կերպասով և նրանք փոքր ինչ նմանում էին այն աթոռներին, որոնց վրայ մինչև հիմայ էլ նստում են եպիսկոպոսները: Եռանկիւնի սեղանները զրած էին անկիւններում, քառանկիւնները բաղմոցի և հայելու առաջ, որի բարակ և ոսկեղոծ շրջանակի վրայ նկարուած տերեւները, ճանձները ծածկել էին սև բիծերով. բաղմոցի առաջ փռուած էր թռչնանկարով զորդը ծաղիկների նման. և ծաղիկների նկարով թռչունների նման. ահա շուք չպահանջող անակի համարեա բոլոր զարդարանքը, որտեղ ապրում էին

իմ ծերունիները: Աղախինների սենեակը լցուած էր դեռահաս և հասակաւոր սպասուհիներով, որոնց երբեմն Պոլլիէրիա Իվանովնան տալիս էր մանր մոճեր բաներ կարելու և ստիպում էր ելախներ մաքրելու, բայց նրանք մեծ մասամբ փախչում էին խոհանոցը և քնում էին: Պոլլիէրիա Իվանովնան պէտք էր համարում նրանց պահել տանը և խստութեամբ հսկում էր նրանց բարոյականութեան վրայ, մինչդեռ որչափ մեծ էր նորա զարմանքը, երբ տեսնում էր, որ մի քանի ամիս չանցած, նրանցից մէկն ու մէկի իրանը սովորականից աւելի գերացած էր լինում: Առաւել ևս այս բանը զարմանալի էր թուում այն պատճառով, որ տանը համարեա ոչ ոք չէր լինում ամուրի սղամարդկանցից, բացի միայն սենեակի աղայից, որ ման էր դալիս մոխրագոյն կիսաֆրակով, բոբիկ ոտքով և եթէ նա կերակուր ուտելիս չլինէր, անշուշտ քնած կլինէր: Պոլլիէրիա Իվանովնան սովորաբար հայհոյում էր յանցաւոր աղախնուն և խիստ պատիժ էր տալիս, որպէս զի այլ ևս այդպիսի բան չ'անի: Լուսամուտների ապակիների վրայ բոլորում էին սարսափելի շատ ճանձեր, որոնց բոլորը խեղդովում էր բոռի հաստ ձայնից, միտցած ուրիշ այլ ճանձերի խլացուցիչ աղղոցների հետ. բայց հէնց որ բերում էին ծրագները, բոլոր այդ ճանձերը հեռանում էին դիշերելու և սե ամպի նման ծածկում, էին ամբողջ առաստաղը:

Աֆանասի Իվանովիչը շատ քիչ էր զբաղվում անտեսութեամբ, չը նայելով որ երբեմն դնում էր հնձուորների մօտ և բաւական ուշապիր կերպով նայում էր նրանց դործին: Կառավարութեան ամբողջ լուծը ընկած էր Պոլլիէրիա Իվանովնայի վրայ: Պոլլիէրիա Իվանովնայի անտեսութիւնը կազմում էր այն, որ նա անգաղար բաց ու խռվի էր անում մթերանոցը, աղ էր դնում, չորացնում էր, եփում էր մրգերից ու բոյսերից անթիւ ու անհամար քաղցրաւէնիներ: Նրա սուճը բոլորովին նման էր քիմիական լաբորատորիայի: Խընձորենու տակ մշտապէս կրակ էր արած լինում և համարեա երկաթէ եռոտանու վրայից չէր վերցնվում քաղցրաւէնիքի

ամանը կամ պղնձէ լազանը ժէլէն մէջը, որ եփվում էր մեղրով, շաքարով և չեմօխիշում թէ էլ ինչով: Մի ուրիշ ծառի տակ կառապանը արաղ էր քաշում, զանազան համ ու զոյն էր տալիս նրան և վերջը լինում էր այն, որ նա ոչ մի ժամանակ չէր կարողանում լեզուն պտտել, և այնպիսի ցնդաբանութիւն էր անում, որ Պոյլսէրիա Իվանովնան ոչինչ չէր հասկանում: Իսկ նա զնում էր խոհանոցը մրտփում: Այս բոլոր աւելորդաբանութիւններից այնքան եփվում, աղվում և չորացնվում էր, որ նրանցով համարեա թէ կարելի էր լցնել ամբողջ բազը (որովհետեւ Պոյլսէրիա Իվանովնան միշտ, բայց ուտելու համար հաշտածից, սիրում էր պատրաստել և պաշարի համար), 'ի հարկէ եթէ որ սորա կիսից շատը չուտէին տան աղախինները, որոնք քաշուելով մթերանոց, այնչափ սարսափելի կերպով կշտապնդվում էին, որ ամբողջ օրը ախ ու վախ էին անում և զանգատվում փորի ցաւից:

Յանքերի և ուրիշ անտեսական գործերի մէջ մոնելու կարողութիւն քիչ ունէր Պոյլսէրիա Իվանովնան: Գործակատարը, միայնած տանուէրի հետ, անողորմաբար դողանում էին: Նրանք սովորութիւն էին արել մոնել իրենց տիրոջ անտառները, որպէս իրենց սեպհականը, բազմութիւ սահնակներ էին շինում և ծախում մօտակայ աօնտվաճառում, բայց դրանից, բոլոր հաստ կաղնիները նրանք վաճառում էին ռաի վրայ կարելու հարեան կողակներին ջրաղացների համար: Մի անգամ միայն Պոյլսէրիա Իվանովնան ցանկացաւ անձամբ քննելու իրենց անտառները: Սրա համար լծեցին կառքը իր ահապին կաշուէ գոգնոցով, որից որ հէնց այն ժամանակ, երբ կառապանը թափահարում էր սանձերը և դեռ միլիցիայում էլ եղած ձիերը շարժվում էին իրենց աեղից, օդը լրվում էր օտարոտի ձայներով, այնպէս որ յանկարծ լսվում էին ջուլթակի, թմբուկի և դայիրայի ձայներ. իւրաքանչիւր մի մեխը և երկաթի կտորը այն աստիճան զնդզնգում էին, որ մինչև ջրաղացները լսվում էր, թէ ինչպէս տիկինը մեկնում է տանից, թէ և այդ տարածու-

Թիւնը երկու վերստից քիչ չէր: Պոյլիւէրիա Իվանովնան չէր կարող չը նկատել անտառի մէջ սարսափելի աւերում և այն կաղնիների կորուստը, որոնք նա գեռ ևս իր երիտասարդ ժամանակ տեսել էր իբրեւ հարիւրամեայ կաղնիներ:

—Սյդ ինչից է, Նիչիպոր, առաջ նա, դառնալով դէպի իր մօտ կանգնած դործակատարին,—որ կաղնիները այդպէս նոսրացրել են: Նայիր, որ քո գլխիդ մտներն էր չը նոսրանան:

—Ինչո՞ւ են նոսրացել, ասում էր սովորաբար դործակատարը, փթել, ոչնչացել են, հէնց այնպէս բոլորովին ոչնչացել են. փչացել են, տիրուհի, փչացել են.

Պոյլիւէրիա Իվանովնան միանգամայն գոհ էր մնում այդ պատասխանից և, տուն վերադառնալով, հրաման էր տալիս, կրկնապատկել միայն պաշտպանների Թիւը այդում շպանական բալերի և մեծ պահունի տանձերի մօտերքին:

Սյդ արժանաւոր կառավարիչները, դործակատարը և տանուաւորը, միանգամայն աւելորդ համարեցին բերել բոլոր ալիւրը իրենց աիրոջ շտեմարանը, հաշուելով, որ իրենց աիրոջը եղածի կէսն էլ բաւական է. վերջապէս այդ կէսն էլ բերում էին նրանք բորբոսնած կամ թրջուած, որ վաճառանոցում անպէտք էր համարուած, բայց որքան էլ չէին գողանում դործակատարն ու տանուաւորը, որքան էլ սարսափելի կերպով լափում էին ամենքը բազում, սկսած դռնապանից մինչև խօզերը, որոնք սպառում էին շտրնների և խնձորների ահագին քանակութիւն և շատ անգամ իրենց դուռներով շարժում էին ծառը, որպէս զի անձրևի առատութեամբ թափուեն մրգերը, որքան էլ կտցահարում էին ծաերն ու աղուաները, ինչքան էլ ծառաները տանում էին իրենց քաւորներին ուրիշ զիւղեր և մինչև անգամ դուրս էին տալիս շտեմարանից հին քաթաններ և մանուածներ, որքան էլ չը գողնային հիւրերը, Ֆլէկմատիկական կառապանները և ծառաները, բայց օրհնեալ հողը ամեն բան այնքան առատօրէն էր պտղաբերում, և Սֆանասի Իվանովիչը ու Պոյլիւէրիա Իվանովնան այնքան քշով էին բաւականանում, որ այդ սարսափելի կողոպուտը աննկատելի էր մնում նրանց անտեսութեան մէջ:

Երկու ծերունիները, հին կալուածատէրերի նախնի սովորութեան համեմատ, շատ էին սիրում ուտել. հէնց որ սկսում էր արշալոյսը բացուիլ (նրանք միշտ շուտ էին զարթնում) և հէնց որ դռները սկսում էին տարբեր ձայնով իրենց նուազահանդէսը, նրանք արդէն նստած էին լինում սեղանի մօտ և սուրճ էին խմում: Սուրճը խմելուց յետոյ Աֆանասի Իվանովիչը դուրս էր գալիս նախասենեակ և թաշկինակը թափ տալով ասում էր. «քըշ, քըշ, դնացէք, հեռացէք, սագեր պատշգամբից»: Բագումը նրան սովորաբար պատահում էր դորձակատարը: Նա ըստ սովորութեան, սկսում էր նրա հետ զրոյց անել, հարցնում էր նրանից դործերի մասին ամենամեծ մանրամասնութեամբ և այնպիսի նկատողութիւններ էր անում նրան ու պատուէրներ տալիս, որոնք կը զարմացնէին ամեն մի մարդու նրա անտեսութեան տեղեակ լինելու մասին և մի որեւիցէ նորեկ չէր համարձակիլ մտածել անգամ, որ կարելի է դողանալ այդպիսի աչքաբաց տիրոջն: Բայց նրա դորձակատարը սատանի յետի ոտն էր, նա զիտէր, թէ ինչպէս հարկաւոր է անտեսել:

Դորանից յետոյ Աֆանասի Իվանովիչը վերադառնում էր տուն և ասում էր, մօտենալով Պոլիսերիա Իվանովնային. — չը, Պոլիսէրիա Իվանովնա, ինչ ես կարծումս, ժամանակ չէ նախաճաշելու:

— Ի՞նչ բան ուտելիք հիմայ, Աֆանասի Իվանովիչ, գուցէ լաւ լինէր խաշխաշով պիրոժնի, կամ ձուածեղ և կամ:

— Դուք զիտէք, օրինակ՝ հէնց պիրոժնի կամ եքուոյ, պատասխանում էր Աֆանասի Իվանովիչը և սեղանի վրայ երևում էր սփռոցը պիրոժիկներով:

Ճաշից մի ժամ առաջ Աֆանասի Իվանովիչը նորից նախաճաշում էր, խմում էր օղի, հին արծաթէ բաժակով, և վրայից չորացրած ձուկը կամ մի քանի սունկ էր ուտում: Նրանք նստում էին ճաշելու ժամի տասներկուսին: Բայց այլ բաներից սեղանի վրայ դրուած էր լինում բազմաթիւ ամաններ ամրացրած խփերով, որպէս զի չը լինի թէ նրանցից դուրս բուրի նախնի համեղ խոհանոցի արդիւնքի հոտն

ու Համբ: Հացի վրայ սովորաբար խօսակցութիւն էր սկսվում ճաշին ամենամօտ առարկաների մասին:

— Ես կարծում եմ, որ այս կերակուրը, ասում էր սովորաբար Աֆանասի Իվանովիչը, մի փոքր այրուել է: Ձեզ այդպէս չէ՞ թուում, Պոլլէէրիա Իվանովնա:

— Ո՛չ, Աֆանասի Իվանովիչ, դուք աւելի իւղ ածեցէք, այն ժամանակ բաժինդ այրուած չի երևալ, կամ ուղում էք, վերցրէք այս սնկով սօուսից և ածեցէք ձեր բաժնի վրայ:

— Այդ էլ լաւ էք ասում, ասում էր Աֆանասի Իվանովիչը, մօտ տանելով իր ափսէն. փորձենք ի՞նչպէս կը լինի:

Ճաշից յետոյ Աֆանասի Իվանովիչը դնում էր Հանդըստանալու մի ժամ, որից յետոյ Պոլլէէրիա Իվանովնան բերում էր կտրած ձմերուկը և ասում էր. այ, փորձեցէք, Աֆանասի Իվանովիչ, ինչպէս լաւ ձմերուկ է:

— Է՛հ, դուք մի՛ք Հաւատալ, Պոլլէէրիա Իվանովնա, որ դրա մէջը կարմիր է, ասում էր Աֆանասի Իվանովիչը, վերցնելով մի լաւ կտոր. — լինում է, որ կարմիրն էլ վատ է դուրս դալիս:

Բայց ձմերուկը անմիջապէս անյայտանում էր: Դրանից յետոյ Աֆանասի Իվանովիչը մի քանի տոնձ էր ուտում և դնում զբոսնելու այգում Պոլլէէրիա Իվանովնայի Հետ: Տուն վերադառնալով Պոլլէէրիա Իվանովնան դնում էր իրեն զործին. իսկ նա նստում էր դէպի բազր նայող ծածքի տակ և նայում էր, թէ ինչպէս մթերանոցի դուռը անդադար բաց ու խուփ լինելով, երևում էր նրա ներսը և աղախինները, մէկը միւսին բռնելով, կամ ներս էին տանում, կամ դուրս էին բերում ինչ որ բաներ փայտի արկղներով, խախալներով, մաղերով և ուրիշ մրդի պահարաններով: Փոքր ինչ սպասելուց յետոյ նա ուղարկում էր Պոլլէէրիա Իվանովնայի ետեւից կամ ինքն էր դնում նրա մօտ և ասում էր.

— Ինչ կը զանուի արդեօք ուտելու, Պոլլէէրիա Իվանովնա.

— Ի՞նչ կուզէք, ասում էր Պոլլէէրիա Իվանովնան, գոնէ դնացի ասէի, որ ձեզ Համար ելակներից մուրաբայ բերեն,

որ ես զիտուլթեամբ պատուիրել եմ պահելու ձեզ համար:

—Այդ էլ լաւ է, պատասխանում էր Աֆանասի Իվանովիչը:

—Կամ, կարելի է, դուք թթուաշ զոնդող ուտէի՞ք.

—Այդ էլ լաւ կը լինի, պատասխանում էր Աֆանասի Իվանովիչը. սրանից յետոյ այդ բոլորը անյապաղ բերվում էր և՛ ինչպէս կարգն էր, ուտվում էր:

Ընթրիքից առաջ Աֆանասի Իվանովիչը էլի մի բան ուտում էր: Տոսի կիսին նստում էին ընթրելու: Ընթրիքից յետոյ իսկոյն դնում էին նորից քնելու և ընդհանուր խաղաղութիւնը տիրում էր այդ զործունեայ և միեւնոյն ժամանակ խաղաղ անկիւնում:

Սենեակը, որտեղ քնում էին Աֆանասի Իվանովիչը և Պոլլիէրիա Իվանովնան, այնքան տաք էր, որ հաղիւ թէ որեւիցէ մի ուրիշ մարդ գիմանար այնտեղ մի քանի ժամ: Բայց Աֆանասի Իվանովիչը յանկանալով որ աւելի եւս տաք լինի, քնում էր վառարանի վրայ, թէև սաստիկ տաքութիւնը յաճախ ստիպում էր նրան մի քանի անգամ զիշերները վեր կենալ և ման դալ սենեակի մէջ: Երբեմն Աֆանասի Իվանովիչը, սենեակում պտտելիս, հառաչում էր: Այն ժամանակ Պոլլիէրիա Իվանովնան հարցնում էր. — Ինչո՞ւ էք դուք ախ քաշում, Աֆանասի Իվանովիչ:

—Աստուած դիտէ, Պոլլիէրիա Իվանովնա, կարծես մի փոքր փորս յաւոտում է, ասում էր Աֆանասի Իվանովիչը:

—Լաւ չէ՞ր լինի, մի բան ուտէիք, Աֆանասի Իվանովիչ:

—Ձեմ իմանում, լաւ կը լինի արդեօք, Պոլլիէրիա Իվանովնա, բայց ինչ կարելի է ուտել:

—Մածուն կամ ինչ որ կ'ուզէիք:

—Ինչու չէ, զոնէ համը տեսնելու համար, ասում էր Աֆանասի Իվանովիչը: Քնաթաթախ աղախներ դնում էր պահարանները քրքրելու և Աֆանասի Իվանովիչը ուտում էր մի լեքը աման, որից յետոյ նա սովորաբար ասում էր. — չիմոյ կարծես փոքր ինչ թեթեւ եմ զգում ինձ:

Երբեմն, եթէ պարզ եղանակ էր և սենեակները աւելի

շատ էին տաքացրած լինում, Աֆանասի Իվանովիչը, ուրախացած, սիրում էր հանաք անել Պոլխերիա Իվանովնայի հետ և խօսում էր մի որևիցէ օտարոտի առարկայի մասին:

— Ի՞նչ կանէիք, Պոլխերիա Իվանովնա, ասում էր նա, — եթէ յանկարծ մեր տունը այրուէր, մենք ո՞ւր կ'երթայինք:

— Է՛հ, Տէր մի արասցէ, ասում էր Պոլխերիա Իվանովնան երեսը խաչակնքելով:

— Հէնց ասենք թէ մեր տունը այրուէց, մենք այն ժամանակ ո՞ւր կը տեղափոխուէինք:

— Ձեմ իմանում, ինչ էք խօսում Աֆանասի Իվանովիչ: Ի՞նչպէս կարելի է, որ տունն այրուի. Աստուած չի թոյլ տալ:

— Բան է, եթէ այրուէց.

— Իէ, այն ժամանակը մենք կը փոխուենք խոհանոցը: Դուք մի առ ժամանակ կը մնայիք այն սենեակում, որտեղ դռնապանն է քնում:

— Իսկ եթէ խոհանոցն էլ այրուէր.

— Ա՜յ քեղ բան: Աստուած պատուհասից կ'ազատի, խոհանոցն ու տունը միանգամից չի թողնիլ այրուելու: Հակառակ դէպքում առ ժամանակ կը տեղաւորուէինք մթերանոցում, մինչև որ նոր տուն կը շինէինք:

— Իսկ եթէ մթերանոցն էլ այրուէր:

— Աստուած զիտէ, թէ ի՞նչեր էք խօսում: Ես չեմ էլ ուզում լսել ձեզ: Մեղք էլ է այդպիսի բաներ խօսելը: Աստուած պատժում է այդ տեսակ մտքեր մտածելու համար:

Բայց Աֆանասի Իվանովիչը դռն լինելով նրանով, որ մի հանաք արեց Պոլխերիա Իվանովնայի հետ, ժպտում էր, նստած իր աթոռի վրայ:

Բայց աւելի հետաքրքիր թուում էին ծերունիները այն ժամանակ, երբ նրանց մօտ հիւրեր էին լինում: Այն ժամանակ ամեն ինչ նրանց տանը ընդունում էր ուրիշ կերպարանք: Այդ բարի մարդիկը, կարելի է ասել, սպորում էին հիւրերի համար: Ինչ որ լաւ բան ունէին նրանք, դուրս էին բերում: Նրանք անընդհատ աշխատում էին հիւրասիրել ձեզ այն ամենով, ինչ որ տալիս էր նրանց տնտեսութիւնը:

Բայց ամենից աւելի ինձ համար հաճելի էր այն, որ բոլոր նրանց հիւրասիրութեան մէջ կեղծաւորութիւն չէր երևում: Սյգ բարութիւնն ու պատրաստականութիւնը այնքան սաղ էին գալիս նրանց, այնպէս մեղմութեամբ արտայայտւում էին նրանց երեսներին, որ ականայ յարգում էիր նրանց խնդիրը: Նրանք հետեանք էին իրենց բարի անխարդախ հոգու պարզութեան ու յստակութեան: Սյս ընդունելութիւնը այն չէր, որով հիւրասիրում է ձեզ արքունական պալատի աստիճանաւորը, որ մարդու կարգ է ընկել ձեր աշխատութիւններով, որ ձեզ բարեբար է կոչում և սողում է ձեր ոտքերի տակ: Հիւրը ոչ մի կերպով այն օրը ճանապարհ չէր դրվում: Նա պէտք է անպատճառ գիշերը մնար:

— Ի՞նչպէս կարելի է այսպիսի ուշ ժամանակ դնալ այդքան հեռու ճանապարհ, միշտ ասում էր Պոլլխէրիա Իվանովնան: (Հիւրը բնակվում էր սովորաբար նրանցից երեք կամ չորս վերստ հեռու):

— Իհարկէ, ասում էր Աֆանասի Իվանովիչը, — ամեն անգամ մի և նոյնը չի լինիլ, կը յարձակուեն աւաղակները, կամ ուրիշ չարակամ մարդիկ:

— Աստուած աղատի աւաղակներից, ասում էր Պոլլխէրիա Իվանովնան, հարկ չը կայ այսպիսի վատ բաներ մտքներովս անց կայնենք այս կէս գիշերին: Աւաղակները չէ, այլ ժամանակը մութն է, ամենեւին չարժէ դնալ: Ձեր կառապանն էլ հօ... ևս ճանաչում եմ ձեր կառապանին: Նա այնպէս փոքրիկ ու թոյլ է. Նրան ով ասես կը թակի, բայցի դրանից նա հիմայ, երեւի, կոնծել է ու մի տեղ քնել:

Եւ հիւրը անպատճառ պէտք է մնար, բայց և այսուամենայնիւ երեկոն ցածր, տաք սենեակում, ոգևորող և քնացնող պատմութիւնը, սեղանի վրայ բերուող միշտ սննդաբար ու վարպետօրէն պատրաստած կերակրի հոար նրան պարզեւատրում էր: Ես ինչպէս հիմա տեսնում եմ, թէ ինչպէս Աֆանասի Իվանովիչը, կռացած, նստած է աթոռի վրայ մշտական ժպիտը երեսին և ուշադրութեամբ, մինչև անգամ մեծ հաճութեամբ, լսում է հիւրին: Շատ անգամ զրոյց էր լինում քա-

ղաքականութեան վրայ: Հիւրը, որ նոյնպէս քիչ էր դուրս եկած լինում իր գիւղից, շատ անգամ, նշանաւոր հայեացքով և գէմքի խորհրդաւոր արտայայտութեամբ, ենթադրութիւններ էր անում և պատմում, որ Փրանսիացիին դաղանի համաձայնութիւն է կայացրել անգղիացու հետ նորից ուղարկելով Բօնապարտին Ռուսաստանի վրայ, կամ հէնց պատմում էր յառաջեկայ պատերազմից և այն ժամանակ Աֆանասի Իվանովիչը շատ անգամ ասում էր, իբր թէ առանց նայելու Պոլլէրիա Իվանովիչի վրայ.

— Ես ինքս ուզում եմ գնալ պատերազմ: Ինչ՞ը ևս չեմ կարող պատերազմել:

— Այ թէ գնացիք, ընդհատում էր Պոլլէրիա Իվանովիչն:— Դուք չը հաւատաք, ասում էր նա, դառնալով դէպի հիւրը.— ալեւորի ինչ բանն է պատերազմ գնալ, առաջին զինուորը նրան կսպանի, Աստուած վկայ, կսպանի:

— Էհ, ինչ անենք, ասում էր Աֆանասի Իվանովիչը,— ես էլ նրան կսպանեմ:

— Ահա՛ լսեցէք միայն, թէ ինչ է ասում, վրայ բերեց Պոլլէրիա Իվանովիչն.— դրա ինչ բանն է պատերազմ գնալ: Դրա ատրճանակներն էլ վաղուց արվէն ժանգոտած ընկած են պահարանում: Եթէ դուք տեսնէիք, թէ ինչ բան են դառել, որ յառաջ քան թէ բացուելը, լուկէքը կը տրաքուէն: Եւ դրա թէ ձեռքը կը պոկուի, թէ երեսը կ'այլակերպուի և թէ ինքը յաւիտեանս յաւիտենից կ'անբախտանայ:

— Ի՛նչ արած, ասում էր Աֆանասի Իվանովիչը, ես նոր դէնք կ'առնեմ ինձ համար. ես թուր կամ կօղակի տէգ կը վերցնեմ:

— Այդ բոլորը երեւակայութիւն է, հէնց մի բան յանկարծ զլուխն եկաւ, կըսիսի պատմել, վրայ բերեց Պոլլէրիա Իվանովիչն զայրոյթով. Ես էլ զիտեմ, որ դա հանաք է անում, բայց ինչ անէք, որ դարձեալ անախորժ է լսիլ: Դա միշտ այդպէս է խօսում. մի ուրիշ անգամ լսում ես լսում և սարսափ է պատում մարդու վրայ:

Բայց Աֆանասի Իվանովիչը, բաւականացած նրանով, որ փոքր ինչ վախեցրեց Պոլխէրիա Իվանովնային, ծիծաղում էր իր աթոռի վրայ նստած:

Պոլխէրիա Իվանովնան ինձ համար ամենից հետաքրքրիր էր այն ժամանակ, երբ հիւրին նա մօտեցնում էր նախաճաշիկի սեղանին. «Այս ահաւասիկ, ասում էր նա, հանելով օղիի շշեց խցանը, օղի է արմատներով պատրաստած. եթէ մէկի ուսը կամ մէջքը ցաւելիս լինի, սա շատ է օգնում. այս էլ ահաւասիկ հաղարտերեւանիով է պատրաստած. եթէ մարդու ականջներում դռուց լինի և երեսին մկնատամ, դա շատ օգտակար է. իսկ սա դեղձի կորիզներով է պատրաստած. այ վերցրէք լի բաժակ և տեսէք ինչ գեղեցիկ հոս ունի... Եթէ մէկը մահճակալից վեր կենալիս, պահարանի կամ սեղանի անկիւնին կպչի և ճակատն ուռի, այն ժամանակ բաւական է միայն, որ հացի վրայ մի բաժակ խմի, մի անգամից կ'անցնի, կարծես ոչինչ չէ եղել»: Սրանից յետոյ այսպիսի դովասանութիւն արվում էր և միւս շէշերին, որոնք համարեա միշտ ունեւին բուժիչ յատկութեւներ: Հիւրին ծանրաբեռնելով այդ բոլոր գեղատնով, նա մօտեցնում էր նրան բազմութիւն ավանդներին. «Ահաւասիկ դա սունկն է պատրաստած մեխակով, այդ միւսը շինած է ընկուղով և ձագախոտով: Դրանց աղ դնել պահելն սովորեցրել է ինձ մի թուրք աղջիկ այն ժամանակ, երբ դեռ ևս թուրքերը մեզ մօտ գերի էին: Այդ թուրք աղջիկը շատ բարի էր, և բոլորովին չէր նկատվում, որ նա թուրքի հաւատ է պաշտում, համարեա բոլորովին այնպէս էր շարժվում, ինչպէս մենք. միայն խողի միս չէր ուտում. ասում էր, որ նրանց հաւատով իբր արգելուած է: Ահաւասիկ այդ սունկը դարաղաթի տերեւով է և մուշկատի ընկուղով է շինուած. իսկ սա վայրի մեխակ է: Ես հէնց առաջին անգամն է, որ քայտով եփեցի, չը դիտեմ, ինչպէս է: Ես գաղանիքը իմացայ հայր Իվանից, փոքրիկ փայտէ ամանի մէջ ամենից առաջ պէտք է փռել կաղնի տերեւները, յետոյ ցանել դրանց վրայ պղպեղ և բորակ, և դնել էլի մի ինչ որ մի ծաղիկ կայ,

դարձելով պոչերը դէպի վեր: Իսկ այս պիրոփիլի է պանրով,
այս ուրդով, իսկ այս, որ Աֆանասի Իվանովեչը շատ է սի-
րում, քալամով և ձիակորեկով:

—Սյո՛ւ, աւելացնում էր Աֆանասի Իվանովեչը, ես այդ
շատ եմ սիրում: Դա շատ փափուկ և փոքր ինչ թթուաշ է:

Ընդհանրապէս Պոյլիէրիա Իվանովեչան լաւ էր տրա-
մադրուած լինում, երբ որ իրենց մօտ հիւրեր էին լինում:
Բարեսիրտ պառաւ. նա ամբողջապէս պատկանում էր իր
հիւրերին: Ես սիրում էի լինել նրանց մօտ և թէպէտ, ինչ-
պէս և բոլորը, ես էլ պայթելու չափ կ'ուռէի, չը նայելով
որ այդ ինձ ֆեսս էր, այնուամենայնիւ ես միշտ ուրախ էի
լինում նրանց մօտ գնալու: Սակայն ես մտածում եմ, չը լինի
թէ հէնց Մալորոսսիայի օդը մարտողութեան օդնելու մի ա-
ռանձին յատկութիւն ունի, որովհետեւ եթէ այստեղ մէկն ու
մէկը փորձէր այդքան կուշտ ուտելու, անկարծիք, փոխա-
նակ անկողնում պարկելու սեղանի վրայ մեկնուած կը լինէր:

Բարի ծերունիներ... բայց իմ պատմութիւնս մօտենում
է մի շատ տխուր անցքի, որ միանգամայն կերպարանափո-
խեց այդ խաղաղ անկիւնի կեանքը: Սյո՛ւ անցքը աւելի ևս
ցաւալի կը թուի, որովհետեւ առաջացաւ մի ամենանշան
դէպքից: Բայց իրերի զարմանալի կազմութեամբ, միշտ չնչին
պատճառները ստեղծել են մեծ անցքեր և ընդհակառա-
կը, մեծ դործերը վերջացել են չնչին հետեանքներով: Մի
որեւիցէ աշխարհակալ ժողովում է իր տէրութեան բո-
լոր դոժերը, պատերազմում է մի քանի սարի, նրա զօ-
րապետները փառաւորվում են և վերջապէս այդ բոլորը
վերջանում է մի կտոր հող վաստակելով, որի վրայ տեղ էլ
չի լինում գետնախնձոր ցանելու. իսկ երբեմն ընդհակառակը
որ և իցէ մի երկու ապուխտ շինողներ այս ու այն քաղաքում
միմեանց հետ կը կռուեն են մի չնչին բանի համար, կռիւը վեր-
ջապէս կ'մեծանայ կը տարածուի մինչև փողոցները, յետոյ զիւ-
ղերն ու շէները և վերջը կը տեսնես բռնկեց ամբողջ տէրու-
թիւնը: Բայց թողնենք այս դատողութիւնները.—նրանք
այստեղ յարմար չեն, բայց իրարնից ես դատողութիւններ

չեմ սիրում, երբ որ նրանք լոկ դատողութիւն են փնտմ:

Պոլլիսէրիա Իվանովնան մի մոխրագոյն կատու ունէր, որը համարեա միշտ կծկուած պարկած էր լինում նրա ոտների մօտ: Պոլլիսէրիա Իվանովնան երբեմն սխալում էր նրան և մատով խուտուտ էր ածում նրա շլինքը, որ և շփացրած կատուն որքան կարելի է աւելի ևս բարձր էր դուրս հանում: Ձէ կարելի ասել, թէ Պոլլիսէրիա Իվանովնան շատ էր սիրում նրան, այլ այնպէս կապուած էր նրա հետ, ըստ որում սովորել էր միշտ տեսնելու նրան: Աֆանասի Իվանովիչը այնուամենայնիւ յաճախ ծաղրում էր նրա այս սէրը, ասելով.

— Ես չեմ իմանում, Պոլլիսէրիա Իվանովնա, թէ դուք ի՞նչ էք հասկանում կատուից, ինչի՞ է նա պէտք: Եթէ դուք շուն ունենայիք, այն ժամանակ ուրիշ բան, շանը կարելի է վերցնել որսի, իսկ կատուն ինչի՞ է հարկաւոր:

— Էհ լսեցէ՛ք, Աֆանասի Իվանովիչ, ասում էր Պոլլիսէրիա Իվանովնան, — Դուք սիրում էք միայն խօսել և ուրիշ ոչինչ: Շունը կեղտոտ է, շունը տպաւորում է, շունը կոտրում է ամեն ինչ, իսկ կատուն խաղաղ կենդանի է, նա ոչ ոքին չարիք չի հասցնիլ:

Սակայն Աֆանասի Իվանովիչի համար միւսնայն էին, թէ կատուները և թէ շները: Նա միայն նրա համար էր այդպէս ասում, որ մի փոքր հեղին Պոլլիսէրիա Իվանովնային: Նրանց այդու ետե կար մի մեծ անտառ, որ թուրրովին ազատ էր փնտցել աչքաբաց դործակատարի ձեռքից, այդ էլ կարելի է այն պատճառով, որ կացնի ձայնը կը հասնէր Պոլլիսէրիա Իվանովնայի ականջին: Անտառը խիտ էր ու բարձի թող արած. հնադարեան ծառերի բները ծածկուած էին կաղնու բարձրացած թփերով և նմանում էին աղաւնիների թաւոտ թաթերին: Այս անտառում ապրում էին վայրի կատուներ: Անտառային վայրենի կատուներին չը պէտք է շփոթել այն չարաճճի կատուների հետ, որոնք վաղվղում են կարների վրայ. դանուկելով քաղաքներում նրանք չը նայելով իրենց վայրի բնաւորութեան, աւելի շատ քաղաքաւորութեամբ են, քան թէ անտառում բնակւողները: Վերջինները ընդհակա-

ռակր, մեծ մասամբ խաւարամած և վայրենի են. նրանք միշտ ման են զալիս նիհար, բարակ. մլաւում են կոպիտ անմշակ ձայնով. նրանք զաղտնի կերպով մտնում են զետնի տակի անցքերով շանմարանները և ճրագու են զողանում. գնում են մինչև անգամ խոհանոցը թռչելով յանկարծ բայ լուսամուտից ներս, երբ որ տեսնում են, որ խոհարարը զուրս գնաց: Ընդհանրապէս ոչ մի աղնիւ զգացմունք նրանք չունեն: Նրանք ապրում են զիշատումով և ծտերի ձագերին խեղդում են հէնց իրենց բների մէջ: Այդ կատունները վաղուցուանից շանմարանի տակի մի անցքից Պոյլսէրիա Իվանովնայի հեգիկ կատուի հոսը առել էին և վերջապէս զրաւեցին տարան նրան այնպէս, ինչպէս ղինուորների մի խումբ խաբում զրաւում է անմիա գեղջկուհուն: Պոյլսէրիա Իվանովնան նկատեց կատուի կորուստը, ուղարկեց որոնելու նորան. բայց կատուն չէր երևում: Անցաւ երեք օր. Պոյլսէրիա Իվանովնան ափսոսեց և վերջապէս բոլորովին մոռացաւ նրան: Մի օր երբ նա իր բանջարանոցը աչքի անցնելուց յետոյ վերադառնում էր թարմ, կանաչ վարունքները ձեռքին, որ նա քաղել էր Աֆանասի Իվանովիչի համար, նրա ականջին հասաւ մի ամենացաւալի մլաւոց: Նա՛ կարծես նուխազացումով, արտասանեց. «փիշի՛, փիշի՛» և յանկարծ մոլախոտի միջից զուրս եկաւ նրա մոխրագոյն կատուն, նիհար, փորը մէջքին կպած. նկատվում էր, որ նա մի քանի օր էր արգէն, որ ոչ մի կերակուր բերանը չէր առել: Պոյլսէրիա Իվանովնան շարունակեց նրան կանչել, բայց կատուն կանգնել էր նրա առաջ, մլաւում էր և չէր համարձակում մօտենալ, երևում էր, որ նա այն ժամանակ շատ էր վայրենացել: Պոյլսէրիա Իվանովնան առաջ գնաց, շարունակելով կանչել կատուին, որ ահ ու երկիւղով գնում էր նրա ետեւից մինչև ցանկապատը: Վերջապէս տեսնելով նախկին ծանօթ տեղերը, մտաւ և սենեակը: Պոյլսէրիա Իվանովնան պատուիրեց նրան միս ու կաթ տալ և նստելով նրա առաջին, ցնծում էր իրեն խեղճ սիրելու ազահուլթեան վերայ, որով նա կտոր կտորի ետեւից կուլ էր տալիս և լախում

կաթը: Մոխրագոյն փախստականը համարեա նրա աչքին գերացաւ և այլ ևս այնպէս ազահուլթեամբ չէր ուտում: Պոյլիւնէրիա Իվանովնան ձեռքը մեկնեց որ շոյի, սղալի նրան, բայց ապերախտը ըստ երեւոյթին վայրենացել, ընտելացել էր վայրի կատուի հետ, կամ բոմանտիկական կանոնների հետ բաւականին ծանօթացել էր, թէ աղքատութեան մէջ սիրով ապրելը արքունիքից աւելի լաւ է. իսկ կատուները, բաղէների նման, մերկ էին. ինչ և իցէ նա թուաւ լուսամուտից դուրս և ոչ ոք անեղիններից չը կարողացաւ բռնել նրան:

Մտածմունքի մէջ ընկաւ պառաւը: «Սյդ իմ մահն էր, որ եկել էր իմ ետեւից». ասաց նա ինքն իրեն և ոչինչ չը կարողացաւ փառատել նրա այդ միտքը: Ամբողջ օրը նա տխուր էր: 'Ի զուր Աֆանասի Իվանովիչը կատակ էր անում հետը և ուղղում էր իմանալ, թէ ինչու նա այդպէս յանկարծ տխրեց. Պոյլիւնէրիա Իվանովնան անպատասխան էր, կամ այնպէս չէր պատասխանում, որ կարելի լինէր բարկացնել Աֆանասի Իվանովիչին: Միւս օրը Պոյլիւնէրիա Իվանովնան նկատելի կերպով նիհարացել էր:

— Զեղ հետ այդ ի՞նչ է պատահել, Պոյլիւնէրիա Իվանովնա, հիւանդ չը լինի՞ք դուք:

— Ո՛չ, ես հիւանդ չեմ, Աֆանասի Իվանովիչ, ես ուղղում եմ ձեզ յայտնել մի օտարոտի անցք: Ես գիտեմ, որ այս ամառը մեռնելու եմ. իմ մահս եկել էր իմ ետեւից:

Աֆանասի Իվանովիչի բերանը, կարծես, հիւանդոտ կերպով ծռուեց. նա ուղղում էր այնուամենայնիւ յաղթել սրտում իր թախիծը և ժպտելով ասաց. — Տէր Աստուած բարերար, այդ ի՞նչ էք ասում, Պոյլիւնէրիա Իվանովնա. դուք դուցէ խաշուի փոխարէն, որ շատ անգամ խմում էք, խմել էք դեղձով օղի:

— Ո՛չ, Աֆանասի Իվանովիչ, ես չեմ խմել դեղձով օղի, ասաց Պոյլիւնէրիա Իվանովնան:

Եւ Աֆանասի Իվանովիչը շատ ափսոսեց, որ ինքն այդպէս կատակ արեց Պոյլիւնէրիա Իվանովնայի հետ և ինքը նախէջ նրա վրայ ու արտասուքը քարշ եղաւ նրա արտեանուններին:

— Ես խնդրում եմ ձեզ, Աֆանասի Իվանովիչ, որ դուք կատարէք իմ կամքս, ասաց Պոլլիսէրիա Իվանովնան։— Երբ որ ես մեռնեմ, թաղեցէք ինձ եկեղեցու պատի մօտ։ Մոխրադոյն գերիէս հազրէք ինձ, այն, որ մանր մանր ծաղիկներ ունի դարչնադոյն ֆէշերքին։ Ատլասէ գէրիէն, որ մաւի դոյն զոլեր ունի, միք հազրէիլ, մեռածին էլ ինչ հազուատ և ինչի համար է նրան. իսկ ձեզ նա կը հարկաւորի. նրանից դուք ձեզ համար խալատ կը կարէք հանդիսաւոր օրերին հազնելու համար, որպէս զի հիւրեր եկած միջոցին պատշաճաւոր կերպով ընդունէք նրանց։

— Աստուած զիտէ, թէ ի՞նչէր էք խօսում, Պոլլիսէրիա Իվանովնա, ասում էր Աֆանասի Իվանովիչը, — դեռ ով զիտէ երբ կը լինի մահը, իսկ դուք հիմիկուց սարսափեցնում էք այգալիսի խօսքերով։

— Ո՛չ, Աֆանասի Իվանովիչ, ես արդէն զիտեմ, երբ է լինելու իմ մահս։ Դուք այնուամենայնիւ միք մտածիլ իմ մասին. ես արդէն ողաւալ եմ և բաւականաչափ ապրել եմ։ Հէնց դուք էլ ասե՛նք ծերացել էք, մենք շուտով կը տեսնուենք այն կեանքում։ Բայց Աֆանասի Իվանովիչը հեկեկում էր, ինչպէս մի մանուկ։

— Մեղք է արատասուիլը, Աֆանասի Իվանովիչ։ Մեղք միք դործէք և Աստծուն միք բարկացնէք ձեր տխրութեամբ։ Ես չեմ ցաւում նրա համար, որ մեռնում եմ. մի բանի համար եմ միայն ես ցաւում (ծանր հառաչոնքը մի ըռպէի չափ ընդհատեց նրա խօսքը). ես ցաւում եմ նրա համար, որ չը գիտեմ, ում հողացութեանը թողնեմ ձեզ. ով կնայի ձեզ վրայ, երբ որ ես մեռնեմ։ Դուք այնպէս էք, ինչպէս մի փոքր երեխայ. նա պէտք է ձեզ սիրի, ով ձեր վրայ հսկելու լինի։ Այդ ժամանակ նրա դէմքի վրայ արապայտվում էր այնպիսի խորին, այնպիսի սրտաղին ցաւակցութիւն, որ չը գիտեմ, կարող էր արդեօք դանուիլ մէկը, որ սառնասրտութեամբ նայէր նրա վրայ։

— Նայիր ինձ, Եաւդօխա, ասում էր նա, դառնալով դէպի շտեմարանապետուհին, որին գիտութեամբ պատուիրել էր կանչելու, — երբ որ ես մեռնեմ, դու մօտիկ կատս տիրօջդ,

կը պահպանես, ինչպէս քո աչքի լոյսը, ինչպէս քո հարազատ զաւակը: Մտիկ կտաս, որ խոհանոցումը պատրաստուի այն, ինչ որ նա սիրում է, որ միշտ ուտելիս մաքուր սպիտակեղէններ ու շորեր առա իրեն, որ հիւրեր պատահելիս, դու զարգարես նրան, ինչպէս յարկն է, եթէ ոչ նա կարելի է հէնց իր հին խալաթով դուրս դայ, որովհետեւ հիմայ էլ շատ անգամ մոռանում է նա, թէ երբ է լի և երբ է սօն օրը: Աչքդ նրանից չը հեռացնես, Եաւգօխա. ես քեզ համար կ'աղօթեմ այն աշխարհում և Աստուած կը վարձատրի քեզ: Չմոռանաս հա՛, Եաւգօխա. դու արդէն ծեր ես. դու երկար ապրելու չես.—մեղք մի՛ անիր հոգուդ: Եթէ դու ուշ չը դարձնես, աշխարհում դու բախտաւորութիւն չես ունենալ. ես ինքս կ'աղաչեմ Աստծուն, որ քո վերջը բարի չը լինի: Դու ինքդ էլ անբախտ կը լինես, քո որդիքդ էլ անբախտ կը լինեն և ամբողջ ձեր ազգատոհմը ոչ մի բանում Աստծու օրհնութիւնը չի ստանալ: Խեղճ պառաւ, նա այն ժամանակը չէր մտածում ո՛չ այն մեծ բոպէի մասին, որ իրեն սպասում էր, ոչ իր հոգու և ո՛չ իր ապագայ կեանքի մասին, նա մտածում էր միայն իր խեղճ ընկերակցի մասին, որի հետ նա անց էր կացրել իր կեանքը և որին նա թողնում էր որբ ու անտէրունջ: Նա արտասովոր շտապով կարգադրեց ամեն բան այնպէս, որ իրենից յետոյ Աֆանասի Իվանովիչը չնկատի իր բացակայութիւնը: Դէպի իր մօտակայ մահն ունեցած հաւատը այնքան ուժեղ էր և նրա հոգեկան դրութիւնը այդ բանին այնպէս էր ընտելացել, որ, ուղիղ մի քանի օրից յետոյ նա անկողին մտաւ և չը կարողացաւ ոչ մի բան ուտել: Աֆանասի Իվանովիչը ամբողջութեամբ ուշադրութիւն էր դարձել և չէր հեռանում նրա անկողնից: «Կարելի է դուք մի բան ուտէիք, Պոլլիէրիա Իվանովնա, ասում էր նա, անհանդսութեամբ նայելով նրա աչքին: Բայց Պոլլիէրիա Իվանովնան ոչինչ չէր խօսում: Վերջապէս երկար լռութիւնից յետոյ, կարծես նա կամեցաւ մի բան ասել, շարժեց շրթունքները և հողին փչեց:

Աֆանասի Իվանովիչը բոլորովին սարսափահար եղաւ.

այդ բանն այնպէս օտարոտի էր թուում, որ նա մինչև անգամ լաց չ'եղաւ. մթնած աչքերով նայում էր նա նրա վրայ, կարծես չը հասկանալով զիսկի նշանակութիւնը:

Ննջեցեալին դրին սեղանի վրայ, հաղցրին այն հազուատը, որ նա ինքը իրեն համար նշանակել էր. ձեռքերը խաչակնքեցին, ձեռքը մեղրամամ տուեցին. ամուսինն այս բոլորի վրայ նայում էր անզգայաբար: Ամեն կոչումի մարդիկ հաւաքուեցին բազմ. բաղմաթիւ հիւրեր եկան յուղարկաւորութեանը, երկայն սեղաններ դրուած էին բազում. մեղրահատիկը, խմիչքները, ուտելիքը ծածկել էին սեղանների երեսը, հիւրերը խօսում, արտասւում, նայում էին հանդուցելու վրայ, դատողութիւններ էին անում նրա յատկութիւնների մասին. նայում էին ննջեցեալի ամուսնու վրայ, բայց նա այս ամենի վրայ նայում էր զարմանքով: Ննջեցեալին վերջապէս տարան. ամբօրը խոնուեց ետեւից և Ա. Ֆանասի Իվանովիչը հետեւեց սրան: Քահանաները զգեստաւորուած էին, արեղակը լուսաւորում էր, ծծի երեխաները լալիս էին իրենց մայրերի զրկում, զեղձանիկները երգում էին, երեխաները շապկանց վաղվում էին և ցնծում ճանապարհին: Վերջապէս դադաղը դրին դի վրայ. նրան պատուիրեցին մօտենալ և վերջին անգամ համբուրել հանդուցելուն: Նա մօտեցաւ, համբուրեց. նրա աչքերում երևեցան արտասուք, բայց մի տեսակ անզգայ արտասուք: Դադաղը իջեցրին, քահանան վերցրեց բաշը և առաջինը ածեց մի բուռը հող. դպրի և երկու տիրացուների ձգողական երգը երգեց վերջին շարականը վճիտ, անամպ երկնքի տակ. մշակները բազմերը վերցրին և հողն արդէն ծածկեց և հաւասարեցրեց դուրը: Այդ ժամանակ ծերունին առաջ եկաւ. ամենքը յետ քաշուեցան, տեղուեցին նրան, ուղենալով իմանալ նրա միտքը. նա վեր բարձրացրեց իր աչքերը, և ասաց. «Այսպէս ուրեմն դուք արդէն թաղեցիք նրան: Ինչո՞ւ համար... նա ընդհատեց և չը վերջացրեց իր խօսքը: Բայց երբ նա վերադարձաւ տուն, երբ որ տեսաւ, որ սենեակը դատարկ է, որ մինչև անգամ այն աթոռը, որի վրայ նստում էր Պոլլէխերիա Իվանովնան, դուրս էր տարած, լաց եղաւ, հեկեկաց

անմխիթար և արտասուքը զետի նման թափվում էին նրա խաւարած աչքերից:

Հինգ տարի անցաւ այդ ժամանակից: Ինչ ցաւ ու տառապանք չէ տանում իր հետ ժամանակը. ի՞նչ տեսակ կիրք կը գիմանայ նրա անհաւասար կռուի մէջ: Ես ճանաչում էի մի մարդու երիտասարդական թարմ հասակում, ճշմարիտ ազնուութեամբ և արժանիքներով լցուած: Ես ճանաչում էի նրան սիրահարուած քնքշութեամբ, կրքոտ, կատաղի, համարձակ, համեստ կերպով և իմ մօտ, համարեա իմ աչքի առաջ, նրա սիրոյ առուրկան—քնքոյշ, գեղեցիկ, որպէս հրեշտակ, կայծակահար եղաւ անողոք մահից: Ես երբեք չեմ տեսել հոգեկան տանջանքի այն աստիճան սուրսափելի արտայայտութիւններ, կատաղի, պրուոզ մրմունջ, այնքան լափող յուսահատութիւն, որքան այդ անբողբ սիրահարի մէջ: Ես բնաւ չէի կարծում, որ մարդ կարող է իր համար ստեղծել այնպիսի մի դժուր, որի մէջ չկայ ոչ մի ստուէր, ոչ մի պատկեր և ոչ մի բան որ գէթ որքան և իցէ յուսոյ նշոյլ եսթաղրէր... Նրան աշխատում էին աչքաթող չանել նրանից ծածկել էին բոլոր զէնքերը, որոնցով նա կարող էր մահացնել իրեն: Երկու շաբթից յետոյ, նա յանկարծ յաղթեց ինքն իրեն, սկսեց ծիծաղել, կատակ անել, նրան աղատութիւն տուեցին և առաջի բանը, որ նա արեց այն էր, որ մի ասորձանակ դնեց: Մի օր յանկարծ հրայանի ձայնը սաստիկ վախեցրեց նորա հարազատներին, նրանք վազեցին սենեակ և տեսան նրան փռուած, փշրուած զաղաթով: Սյն ժամանակ դիպուածով այնտեղ եղող բժիշկը, որի արհեստի համբաւը ամենուրեք տարածուած էր, նրանում կենդանութեան նշաններ տեսաւ, վերքը այնքան մահացու չգտաւ և նա 'ի դարմանս ամէնքի, առողջացաւ: Նրա վրայ հսկողութիւնը ևս առաւել սաստկացրին. մինչև անգամ սեղանի վրայ նրա առաջ դնակ չէին դնում և աշխատում էին հեռացնել ամէն ինչ, որով նա կարող էր խփել իրեն: Բայց նա մօտ ժամանակում մի նոր միջոց մտածեց և ահա իրեն զցեց անցնող կառքի անիւների տակ: Նրա ոտ ու ձեռքը կոտրուեց, բայց կրկին առողջացաւ:

Սորանից մի տարի յետոյ, ես տեսայ նրան մի բաղմամարդ դահլիճում: Նա սեղանի մօտ նստած, ուրախ խօսում էր, ծածկելով խաղի կարտը և նրա յետևին կանգնել էր սեղանի մէջքին կռթնած նրա ջահիլ կինը նորա շահածը ժողովելով:

Պոլլիէրիա Իվանովնայի մահից յիշեալ Հինգ տարին անցնելուց յետոյ, ես այն կողմերում պատահելով, մտայ Աֆանասի Իվանովիչի խրճիթը, այցելելու իմ վաղեմի հարեանին, որի մօտ մի ժամանակ ուրախ օր էի անցկացնում և կշտանում բարեհոգի տանտիկնոջ ձեռքով եփած խորտիկներով: Երբ որ ես մօտեցայ բազին, տունը երկու անդամ աւելի Հին երեւոյաւ ինձ. դիւղական խրճիթները բոլորը թեքուել էին կողքերի վրայ, անտարակոյս այնպէս, ինչպէս և իրենք տէրերը. ցանկապաան ու բախի պարիսպը բոլորովին աւերուել էին և ես ինքս տեսայ, թէ ինչպէս խոհարարուհին ցանկապատից փայտեր էր հանում վառարանը վառելու համար, այն ինչ նրան հարկաւոր էր միայն երկու քայլ էլ աւելի անել, որ մի փոքր հեռուում վեր ածած չրփուց վերցնէր: Ես ավրտութեամբ մօտեցայ բազին, մի և նոյն դամիռները և փոքրիկ շները, արդէն կուրացած կամ կոտրած ոտերով, հաչեցին, վերև բարձրցրած իրենց աղիքանման ազինները: Ինձ զիմաւորեց ծերունին: Այս ուրեմն նա էր, ես իսկոյն նրան ճանաչեցի. բայց նա կռացել էր առաջուանից երկու անդամ աւելի: Նա ինձ ճանաչեց և բարեկեց միևնոյն ինձ ծանօթ ժպիտով: Ես նրա ետեից մտայ սենեակ: Թուում էր, որ ամեն ինչ առաջուայ պէս էր, բայց ես ամէն բանում նկատեցի մի զարմանալի անկարգութիւն. մի ինչ որ բանի զգալի բացատրութիւն. մի խօսքով ես զգացի բոլոր այն օտարոտի զգացմունքները, որ տիրապետում են մեզ, երբ մենք մանում ենք առաջին անդամ մի որբեայրու տուն, որին առաջ ճանաչում էինք, իբրև մի անբաժան ընկեր իրեն կնոջ, որի հետ անց է կացել իր բոլոր կեանքը: Այդ զգացմունքները նման են լինում նրան, երբ մենք տեսնում ենք մեր առաջ առանց ռաի մի մարդու, որին միշտ տեսել էինք առողջ: Ամեն բանում երեւում էր հոգատար Պոլլիէրիա Իվանովնայի բացակայութիւն:

նը. հացի վրայ մի դանակ տուեցին առանց պատառաքողի, կերակուրները հօ էլ այնպէս հմտութեամբ չէին պատրաստուած. անտեսութեան մասին ես չ'ուզեցայ էլ հարցնել, վաստում էի մինչեւ անդամ'նայել անասական դորձերին:

Երբ որ մենք նստեցինք հացի, աղախինը կապեց Աֆանասի Իվանովիչի օձիքից անձեռոցիկը և շատ էլ լաւ արեց, որովհետեւ առանց նրան, նա բոլոր խալաթը կ'ապականէր սօստով: Ես աշխատում էի մի բանով նրան զբաղեցնել և պատմում էի զանազան նորութիւններ: Նա լսում էր նոյն ժպտով. բայց ժամանակ առ ժամանակ նրա հայեացքը բոլորովին անզգայ էր և մաքերը նրա մէջ ոչ թէ ցրվում էին, այլ անհետանում: Շատ անգամ բարձրացնում էր նա զգալը քաշովով և փոխանակ բերնին մօտեցնելու տանում էր դէպի քիթը. իր պատառաքաղը փոխանակ խրելու ճուտի մնի կտորի մէջ տանում էր դէպի ջրի ամանը և այն ժամանակ աղախինը ձեռքիցը բռնելով տանում էր ճուտի մնի վրայ: Մենք երբեմն մի քանի բոպէներ սպասում էինք հետեւալ կերակրին: Աֆանասի Իվանովիչը մինչեւ անգամ ինքն էր այս նկատում և ասում: Ինչո՞ւ այդքան ուշացնում են կերակուրը: Բայց ես տեսնում էի դռան արանքից, որ մեզ ավսէ բերող տանող աղան տմենէին չէր մտածում այդ մասին և քնում էր գլուխը քարշ արած աթոռից:

— Ահա այս այն կերակուրն է, ասաց Աֆանասի Իվանովիչը, երբ որ տուեցին մեզ մածնով Բոյանին, այս այն կերակուրն է, շարունակեց նա, և ես նկատեցի, որ նրա ձայնը սկսեց զոզալ և արտասուէքը քիչ մնաց զլորուի նրա արձր-ձեղոյն աչքերից, բայց նա լարում էր բոլոր ոյժերը, ուղենալով պահել արտասուէքը,— այս այն կերակուրն է, որ հան... հանդու... և յանկարծ արտասուէքը հեղեղի պէս թափուեց նրա աչքերից... նրա ձեռքն ընկաւ ավսէի վրայ, ավսէն զլորուեց, թռաւ և կտորուեց. սօստը նրան ողողեց: Նա նստել էր անզգայաբար, անզգայաբար բռնել էր զգալը և արտասուէքը, առուի նման, ինչպէս շարունակ հոսող շատրուան, հոսում, թափվում է առատաբուխ նրա վրայ քաշած անձեռոցի վրայ:

Աստուած իմ, մտածում էի ես, նայելով նրա վրայ, Հինգ տարի ամենակործանիչ ժամանակամիջոց... Ճերունին, արդէն անզգայացած ճերունին, որի կեանքը, կարծես, ոչ մի անգամ համարեա չէր յուզուել հոգեկան ոչ մի սաստիկ զգացումից, որի ամբողջ կեանքը, կարծես, կայանում էր միայն բարձր աթոռի վրայ նստելում, չորացրած ձկներ և տանձեր ուտելում, բարի պատմութիւններ պատմելում—և մի այդպիսի երկայն, մի այդպիսի սաստիկ տխրութիւն... Ինչն է մեզ վրայ աւելի ուժեղը... Կիրքը թէ սովորութիւնը... Կամ թէ բոլոր ուժեղ արտայայտութիւնները, մեր ցանկութիւնների և եռացող կրքերի ամբողջ փոթորիկը հետեանք է միայն մեր երիտասարդ հասակին և Հինց սորա համար է մեզ թուում խոր և աւերիչ... Ինչ և լինէր, բայց այդ ժամանակ մեր բոլոր կրքերը երեսպայական էին թուում ինձ այդ երկար, հանդարտ, համարեա անզգայ սովորութեան դէմ: Մի քանի անգամ փորձեց նա արտասանել հանգուցեալի անունը, բայց խօսքի կիսում նրա խաղաղ և սովորական դէմքը ցնցողաբար պլակերավում էր և մանկական լացը սարսափեցնում էր ինձ մինչև սրտիս խորքը: Ոչ այս այն արտասուքը չէ, որով սովորաբար այնպէս առատ են իրենց ցաւալի դրութիւնը և անբաղդ վիճակը ձեզ ներկայացնող ճերունիները, այո՛ նաև այն արտասուքը չէր, որ նրանք գլորում են մի բաժակ փնջի վրայ, ոչ սա այն արտասուքն էր, որ թափվում էր ինքն ըստ ինքեան, առանց հարցնելու, որ հաւաքուել էր արդէն սառած սրտի ցաւի դառնութիւնից:

Նա սրանից յետոյ երկար չ'ապրեց: Ես վերջին անգամ ները լսեցի նրա մահուան մասին: Զարմոնալի է, այնուամենայնիւ, այն, որ նրա մահուան հանգամանքները նմանութիւն են ունեցել Պոլլիսերիա Իվանովնայի մահուանը: Մի օր Աֆանասի Իվանովիչը վճռեց մի փոքր ման դալ պզուտ մը: Երբ որ նա հանդարտ գնում էր ճանապարհին իր սովորական անհոգութեամբ, առանց մի որ և իցէ մաքի, նրան մի զարմանալի անցք պատահեց: Նա յանկարծ լսեց որ նրա յետևից մէկը բաւականին որոշ ձայնով արտասանեց. «Աֆա-

նասի Իվանովնէ)։ Նա յետ նայեց, բայց բոլորովին ոչ ոք չկար։
Նայեց չորս կողմը, մտիկ տուեց թփերի մէջ—ոչ մի տեղ ոչ ոք
չը կար։ Օրը հանդարտ էր և արեգակը լուսաւորում էր։ Նա
մի ընդհատ չափ մտածմունքի մէջ ընկաւ, նրա դէմքը կարծես
կենդանացաւ և նա վերջապէս արտասանեց. «այդ Պոլ-
կէրիս Իվանովնան է կանչում ինձ»։

Ձեզ, անկասկած, մի ժամանակ պատահել է լսել ձեր տ-
նուէրը հնչող մի ձայն, որը հասարակ մարդիկ նրանով են բա-
ցատրում, իբր թէ հողին կարօտում է մարդուն և կանչում
է նրան և իբր դրանից յետոյ մարդ անպատճառ մեռնում է։
Խոստովանվում եմ, որ ինձ միշտ սարսափելի էր թուում այդ
խորհրդաւոր ձայնը։ Ես յիշում եմ, որ երեխայ ժամանակս
շատ եմ լսել այդ ձայնը, երբեմն յանկարծ իմ ետեւում մէկը
պարզ կերպով տալիս էր իմ տնուէր։ Օրը սովորաբար այդ
միջոցին շատ պարզ էր և արեգակային, ոչ մի ծառի տերեւ
այգու մէջ չէր շարժվում, մեռելային խաղաղութիւն էր տի-
րում։ Մինչև անգամ ճագուռն այդ միջոցին դադարել էր եր-
գելուց, ոչ մի հողի չկար այգում։ Բայց խոստովանվում եմ,
եթէ ամենակատաղի և փոթորկալի դիշերը, իր տարերքի ամ-
բողջ դժոխքով, վրայ հասնէր ինձ մենակ տնանցանելի ան-
տառի մէջ, ես այնքան չէի վախենալ նրանից, որքան այդ
ահարկու խաղաղութիւնից անամպ ցերեկը։ Ես սովորաբար
այն ժամանակ վախճում էի այգուց մեծ երկիւղով ու շնչա-
սպառ և այն ժամանակ էի միայն հանդատանում, երբ որ
պատահում էր ինձ մի մարդ, որի դէմքը հեռացնում էր այդ
սարսափելի սրտաղին դատարկութիւնը։

Նա ամբողջութեամբ ենթարկուել էր իր հոգեկան հա-
մոզմանը, որ Պոլկէրիս Իվանովնան կանչում է նրան. նա
ենթարկուել էր խոնարհ երեխայի կամքով, չորացել էր, հա-
ղում էր, հալվում—մաշվում էր, որպէս մի ճրագ և վերջա-
պէս հանդաւ այնպէս, ինչպէս նա, երբ որ արդէն ոչինչ չէր
մնացել, որ կարողանար պահպանել նրա թոյլ բոցը։ «Թա-
ղեցէք ինձ Պոլկէրիս Իվանովնայի մօտ»—ահա այն բոլորը,
ինչ որ նա արտասանեց իր մահից առաջ։

Նրա յանկուլթիւնը կատարեցին և թաղեցին եկեղեցու մօտ Պոյլսէրիա Իվանովնայի գերեզմանին կից: Յուզարկառութեանը աւելի քիչ էին Հիւրերը. բայց Հասարակ ժողովուրդը և աղքատները շատ շատ էին: Կալուածատէրերի անսկիւր արդէն բոլորովին ամայացաւ: Աչքարաց դործակատորը զիւղատիրոջ հետ քաշեցին իրենց խրճիթները բոլոր մնացած Հին իրեղէնները, որոնք չէր կարողացել գողանալ շտեմարանապետուհին:

Շուտով եկաւ, յայտնի չէ թէ որտեղից, մի հեռու աղղական, կալուածների ժառանգը, որ առաջ եղել էր պարուշիկ, չեմ' յիշում որ գնդում. սարսափելի վերանորոգիչ: Նա խզոյն տեսաւ խիստ մեծ քայքայուած և անկում անտեսական գործերի մէջ. այդ բոլորը վճռեց նա անպատճառ արմատախիլ անել, ուղղել և մոյցնել ամեն բանում կարգ ու կանոն: Առաւ վեց հատ գեղեցիկ անպլիական մանգաղներ, իւրաքանչիւր մի խրճիթին միւսեց առանձին համար և վերջապէս այնպէս յաջողակ կարգաւորեց, որ կալուածը վեց ամսից յետոյ խնամակալութեան տակ առնուեցաւ: Երկու անձնաւորութիւններից կազմուած խմբատուն խնամակալութիւնը տեղափոխեց կարճ ժամանակամիջոցում բոլոր հաւերին և նրանց ձուերը: Համարեա զետնին հաւասարուած խրճիթները միանդամայն աւերակ դարձան, մուժիկները արբեցութեան ետեից ընկան և մեծ մասամբ սկսեցին փախտական համարուիլ: Իսկ իսկական կալուածատէրը, որ այսու ամենայնիւ բաւական խաղաղ էր ապրում իր խնամակալների հետ և նրանց հետ 'ի միասին փունջ էր խմում, շատ սակաւ էր զալիս իր զիւղը և երկար չէր մնում այնտեղ: Նա մինչև հիմայ էլ ման է դալիս Մալօրօսսիայի վաճառանոցներում, մանրամասնօրէն անդեկութիւն է հաւաքում մեծ արգիւնաբերութեան գների մասին, այսինքն ալիւրի, մեղրի և այլն, բայց գնում է միայն մանր մոմեր բաներ, ինչպէս օրինակ, կոյծաքար, մաքրան մեխ և առհասարակ ամեն, որ միտեղ հաւաքած մի ռուբլիից աւելի արժէք չի ունենայ:

ԲՆՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ





Գարուն, նկար Ռեպին:



Մեր հանդիսում քանիցս խօսել ենք մեր մեծանուն նկարիչ Այվազովսկու մասին և անգլուորել արաստիպ օրինակներ նորա յայտնի նկարներէց: Այս զրքում գնում ենք նորա «Հրէաների անցնելը Կարֆի Զովից», մի պատկեր՝ որ նկարուած է 1890 թ. և ձեռք բերած Մոսկուայի յայտնի գրամատէր Պօլեակովից: Նկարիչը պատկերացրել է այն բոլէն, երբ որ բոլոր իսրայէլացոյ ազգը յաջողութեամբ անցել է ասիական ամբը և՛ իսրայէլացիներէց վերջիներն արգէն յամաք են հասել, իսկ ծովի կատաղի ալեքները խոնուելով՝ կուլ են տալիս երբայցիներին հեռեւոյ հազարաւոր եղիպտացիներին: Երկինքը պատել են թուխոյ, չարագուշակ ամպերը և այդ մեծ անցքը, որ կատարուել էր Նախախնամութեան կամքով, կարծես թէ ներգաշնակում է սարերքի մրցման մեծասրանչ երևոյթի հետ: Հրէաների ամբօխի մէջ բարձրիլլախ երեւում է Մովսէսի հոյակապ անպարը, որ կարծես կոչում է ծովի ալեքներին Աստուծոյ պատաստանը կատարել եղիպտացիների դէմին:—Վաթսուեական թուականների վերջերը Այվազովսկին նկարեց մի մեծ պատկեր նոյն նիւթի մասին և պատկերացրեց այն բոլէն, երբ եղիպտական զերութիւնից ազատուած ուրախ և զուարթ իսրայէլացիների զլիւին հրեզէն սիւն էր իջել: Այս նկարը զարգարում է նկարչի սրահը Թէոփոսիոյում:

Հ. Սեմիրապսիու անունն արգէն ծանօթ է մեր ընթերցողներին «Արաքսի» անցեալ տարուայ զրքից, ուր մենք զեռնել ենք այս անուանի արուեստագէտի հակիրճ կենսադրու-

Թիւնք և նորա ամենալաւ նկարներէն մինը: Մեր այս գրքում Սեմիրազսկու բաւականին խոշոր, թէև նախընծայ՝ բայց իւր ժամանակին մեծ աղմուկ հանած մի արտագրութեան հետ միատեղ՝ զետեղում ենք այս արուեստագէտի հասուն արտագրութեան արտատիպ նկարը— «Գէլ»-«Հ»- «Էրգը»: Այս պատկերի նիւթը նա վերցրել է իր սիրած կլասիք աշխարհից: Նկարուած շէնքերի ճարտարապետութեանը նայելով, անցքը պատահում է Պոմպէում: Երկու չքնաղ աղջիկներ, նստած ճլորթում, օխրազին և ուշագրութեամբ լսում են նուրիացի դերուհուն, որ քնարին ձայնակցելով, լի վշտով երգում է ըստ երևոյթին իր հեռաւոր հայրենիքի մի օխուր երգ: Նայելով այս պատկերի վերայ, որը լի է անդորր մեղամոգձոտութիւնով, ահամայ մտածում ես, որ համամարդկային զգացմունքը մարդկանց, մանաւանդ կանանց մէջ, կապում է իրարու միևնոյն մտածմունքներով, միևնոյն հոգեկան յուզումներով, առանց ցեղերի տարբերութեանը, զգեստների զանազանութեանը նայելու: Այս նկարը փայլում է իր գծագրութեան նրբութիւնով, ներկերի գեղեցիկութիւնով և ընտիր լուսաւորութիւնով, որոնցով խիստ յաջողակ կարողանում է օգտուել այս նկարիչը: Մեր արտատիպ նկարը, որը արապայտուած է մի գոյնով, հազիւ թէ կարող լինի մի թոյլ գաղափար տալ այս՝ իսկ որ գեղարուեստական գանձի գեղեցիկութեան մասին:

«Բրիստոս և պոռնիկ կինը», ինչպէս յիշեցինք, չ. Սեմիրազսկու առաջին աշխատութիւններից մէկն է, որի մէջ լիովին արապայտուել է նորա տաղանդի կորովը և նորա արուեստագիտական ստեղծագործութեան յետագայ բնաւորութիւնը: Նորան պէտք են—ընդարձակութիւն, ամբոսի բաղմունքութիւն, հարաւային արեգակի փայլումը ներկերի փարթամութիւն և սրտառուչ, զօրեղ բովանդակութիւն: Այսպէս են նորա պատկերները— «Բրիստոնէութեան ճրագները», «Փրինա» և ուրիշները:— «Բրիստոս և պոռնիկ կինը» ըստ երևոյթին նկարուած է երեւելի ուռւ բանաստեղծ կոմս Ալէքսէյ Պ. Տոլստոյի յայտնի «պոռնիկ կին» վիպասանութեան աղգեցութեամբ, դորա մէջ պատմուած է Բրիստոսի երեւումը

պոռնիկ կնոջ առջև, որը զինելից բաժակը ձեռքին՝ յանդրդ-
նաբար մօտենում է Փրկչին, բայց՝ ահաբեկուած նորա հան-
դարտ հայեացքի աստուածեղէն սրբութեամբ, յետ է քաշ-
վում այլոյլուած: Փրկչի խիստ դէմքը, նորա վսեմ քայլուած-
քը պատկերի լաւագոյն մասն են կազմում: Նոյնպէս լաւ է
դասաւորուած ուրախութիւն անող ամբոխը, նորա մէջ կան
գեղեցիկ նկարած շատ պոլսներ, բոլոր պատկերի վերայ ա-
րեգակի ցոլքը, լուսաւորելով ամբոխի փարթամ զդեսաների
դոյնդոյն անկուածները, մի հրապուրիչ սպաւորութիւն է
դործում: Պակաս յաջող է, մեր կարծիքով, պոռնիկ կնոջ կեր-
պարանքը, որի արտաքինը չէ համապատասխանում անձնա-
վաճառ կնոջ յանգուզն գեղեցկութեանը, որ նկատի ունէր
նկարիչը պատկերացնել: Ոչ իւր դէմքով, ոչ բռնուածքով նա
չէ դործում այն սպաւորութիւնը, որ պէտք էր սպասել այս
դէպքում: Իսկուպէս սա մի շատ սովորական կին է, որ աչքի չէ
ընկնում ոչ իւր գեղեցկութեամբ և ոչ հպարտ կերպարանքով:

Գեղարուեստից ծեմարանի պրօֆ. Վերեշչայինը, որը նոյն
ծեմարանի դասատուն է այժմ, յայտնի է իր նկարներում դժե-
րի ամենաճիշտ արտայայտութեամբ: Նորա երկու նկարների
արտատիպ փոքրիկ օրինակներում— «Հոսիմայեցի աղջկէն»
և «Բոկոֆն»—ներկայանում են մշանջնական քաղաքի բնորոշ
երեսաներն իրենց արտայայտիչ դէմքերով: Աղջկէները ար-
տայայտում են հարաւի գուտարների աշխոյժ և ուրախ բնու-
թեանը: Նրանցից մէկը երգում է մի ինչ որ ուրախ բան
դա՛հիրայի ընկերակցութեամբ, իսկ միւսը լսում է նրան լարու-
ած ուշադրութեամբ: «Բոկոֆն» պատկերացնում է մուսլաւի, մի
կէս-սոված, իր տարիքին անհամեմատ զարգացած մի մանկան,
փողոցում, Իտալիոյ երկնքի կիզիչ արեւի տակ մեծացած:

Ուսուցչուհի և քանդակագործ Փոն-Բոկի «Ձմեռահին»
կարերի է դասել նորա ամենաշնորհալի նկարների շարքում:
Մի՛ դեռ հազիւ պատանի աղջկի, կանացի գեղեցկութեան
հազիւ զարգացող ձևերով, նազելի կերպով թեքուել է, որ

կարթից հանի բռնուած ձկնիկը: Մանկան անմեղ հայեացքը, որ դարձրել է նա իր զոհի վերայ, գիտողին մոռացնել է տալիս, որ նորա առաջ կանգնած է արդէն հասունացող մի կին իր սլաստիք գեղեցկութեան բոլոր յատկանիշներով:

«Արաքսի» ընթերցողներն արդէն միջոց են ունեցել ծանօթանալու մեր հայրենակից նկարիչ ՄաՀատեսեանցի թէ կենսագրական անգեղութիւններին և թէ նորա մի քանի պատկերների օրինակներին: Այս համարում գնում ենք նորա «Լոսնեալ գիշերը Սև Զովի վերայ» պատկերի արատախարհ, նա խիստ ազգեցութիւն է զործում լուսնի Փօսֆօրային լոյսի պատճառով, որով լուսաւորուած է լայնատարած ծովային մակերևոյթը, մինչ գեռ ինքը լուսինը թաղնուել է թուխպ ամպի յետեւ: Բոլոր պատկերը թովիչ ազգեցութիւն է աւնում և լի է բանաստեղծութեամբ: Այս ապացոյց է, որ ՄաՀատեսեանը անդադար կատարելագործուելով արուեստագիտութեան մէջ (technik), ոչ միայն զիտ է ընդօրինակել բնութիւնը, այլ և արտայայտել նորա զործած տպաւորութիւնը:

«Արաքսի» անցեալ զրքում գրած «Փրկւալիսն սպասողներ» նկարի համար մոռացել էինք յիշել, որ Պ. ՄաՀատեսեանց ստացել է արծաթեայ մեծ մեդալ, իսկ «Փոքր ալեգիլը» երկնայեան դէժ» հաիւզի համար, որ նկարել է երկու ժամում 1886 թ., ստացել է Գեղարուեստից ձեմարանից արծաթեայ փոքր մեդալ: Այս հաիւզն այնքան յաջող է և ջուրը այնպէս կենդանի արտայայտուած, որ կատարեալ հիացում է պատճառում:

«Ռուսաց նկարիչների Ընկերութեան» այս տարուայ ցուցահանդիսումը Պ. ՄաՀատեսեանց գետեղած էր երկու նկար, որոնցից մինն է այս զրքում գրած «Գիշերը Սև Զովի վերայ» նկարը, որի մասին տեղոյս թերթերը մեծ համակրանքով խօսեցին: Պ. ՄաՀատեսեանը մասնակցեց նաև յօգուտ սովետների հրատարակած հանդիսին՝ գետեղելով այդտեղ մի ծովանկար:

Պ. Բաշինջաղեանի «Զնահալսք Կովկասում» պատկանում է մեր երխաստարգ նկարչի այն գեղեցիկ աշխատու-

Թիւններ շարքին, որոնց մասին մենք արդէն խօսել ենք «Արաքսի» մէջ: Նկարագրելով իւր ջերմ սիրած Կովկասի բնութիւնը, այս պատկերի մէջն էլ նա գեղեցիկ կերպով միաւորել է իսկական ճշմարտութիւնը բանաստեղծական արամադրութեան հետ,—մի յատկութիւն, որ այնպէս սովորական է նորա տաղանդին: Այս նկարի մէջ, յաւակցաբար, չէ կարելի տեսնել նկարչի զոյնների թափանցութիւնը և արեւի լուսաւորութեան գեղեցկութիւնը: Այսու ամենայնիւ մեր տեղաւորած նկարը ընդհանուր զաղափար է տալիս Բաշինջաղեանի վարպետութեան մասին, որին ամենայն վճատահոգութեամբ կարելի է փայլուն ապագայ դուշակել, եթէ միայն նա կ'շարունակէ բնութեան ուսումնասիրութիւնը՝ օրինակներ առնելով նոյն իսկ բնութիւնից: Բանաստեղծական արամադրութիւն նա ունի այնքան, որ այժմս էլ կարող է ճշմարիտ արուեստագէտների շարքում տեղ բռնել:


«Արաքսի» վերջին դրքում մենք հաղորդել էինք մի քանի կենսագրական տեղեկութիւններ մեր անուանի քանդակագործ պ. Ոսկանի մասին, որն իր աչքի ընկնող տաղանդով դրանց չռովմի Գեղարուեստից ձեմարանի ուշադրութիւնը, որակը նա ուսել էր և արժանացել ասկեայ մեդալի: Այժմ վարելով տեսչի և պրոֆեսորի պաշտօն Պոլսի գեղարուեստից դպրոցում, պ. Ոսկանը երբեմն արտադրում է փոքրիկ, բայց գեղեցիկ քերամիգեայ արձանիկներ խիստ բնորոշ և կենդանի արտայայտուած: Մեր ազգային քանդակագործի տաղանդի բնաւորութեան մասին կենդանի զաղափար տալու նպատակով, պնում ենք նորա երկու պարող արձանիկների օրինակները—Ձէյրէկ և նորա կինը: Մանրամասնութիւնների մշակման ընտիր նրբութիւնները, գէմքերի արտայայտութիւնը, գեղեցկութիւնը և կենդանի շարժումները արտայայտում է նա միշտ զարմանալի կատարելութեամբ, որոնց առանձին կերպով դուրս է բերած այս երկու արձանիկների մէջ: Ձէյրէկի կերպարանքն արտայայտում է անձնավատահ մի սրտերադմոզել յատկութիւն և ասիական իգիւն նրբաճաշակ հոգացողութիւնն՝ իւր հաղուստի

մասին, որ և մշակել է արուեստագէտը առանձին խնամքով: Զէյթէկուհին շնորհաբեղ է և նաղանի, բայց որպէս սարուկ, նա հագնուած է անհոյ, անճաշակ: Արուեստագէտը հասկացել է այդ և արտայայտել է նորա երեսի գեղեցկութիւնը, ուրախ ժպիտի նաղելիութիւնը և կրծքի հրապուրիչ նրբութիւնը, սակայն, ինչպէս սպասելի էր, թողել է առանց ուշադրութեան նորա հագուստի մանրամասնութիւնների մշակումն:

Անուանի գերմանացի նկարիչ Թումանի «Կէանքի և Տահաւսի պէտքեր» նկարը արդի գեղարուեստի յայտնի արտադրութիւնների շարքին է պատկանում:

Նկարիչը նկարագրել է ճին Յունաստանի երեք դիցուհի, որոնք այլաբանօրէն ներկայացնում են կեանքը և մահը: Դոցանից մէկը, որից պլաստիք գեղեցկութիւն և մատաղութիւն է շնչում, մանուկ է կեանքի թելը. երկրորդը, նոյնպէս մատաղ, փառքի կաղնու ճիւղով չափում է մարդկային կեանքի սահմանը. իսկ երրորդը, զառամեալը, անշարժ մեռելատիպ նայուածքով—որ սարսուռ է ազդում մարդուս—կտրում է մկրատով կեանքի թելը: Նայելով այս պատկերի վերայ, որի արտատիպ նկարը դնում ենք այս զրքում, ականջ հիանում ես նկարչի հանճարով, որ այնպիսի զարմանալի արտայայտութեամբ պատկերացրել է հին յոյների հաւատքը: Երկու մատաղահաս պարկանների պլաստիքական գեղահրաշ գեղեցկութիւնը բոլորովին համապատասխանում է կեանքի զաղափարին և այն անտիք ձևերին, որոնց անմահացրել են յոյն քանդակագործները մարմարիոնի միջոցաւ: Մահը պատկերացրած է զառամեալ կնոջ մէջ իր անզգայ ու անշարժ հայեացքով, որ մի զարմանալի հակապատկեր է կեանք ներկայացնող մատաղ կանանց զմայլիչ ձևերին,—նմանում է անդութ և անխուսափելի ճակատագրին: Որքան աւելի ես նայում այս պատկերին և խորասուզվում, այնքան աւելի համոզվում ես, որ ամեն ինչ այս անցաւոր կեանքում ունայնութիւն է:

Լ. Մաղիբեանց



Հարի ձորը և Սիսերեան գետը:


Карсское ущелье и рѣка Арпачай.

Автогипія Ангерера въ Вѣнѣ.



100 100





Մեծ-Ղարաբաղի լեռներ:

Б. Караклисы.


Автотипія Ангерера въ Вѣнѣ.

Հրատ. «Արար» Հանդիսի:

тип. 9д. 10000.

Изд. лит.-худ. обозрѣнія „Аракс“.








Խրամ զեռի աւաղ կամուրջը ՍանաՀնում: Տէր-Դանիէլեանցի լուսանկարից:


Мостъ на рѣкѣ Храмъ въ Санаинѣ.
Съ фотографіи Теръ Данильянца гравиревалъ Еме.

Հրատ. «Արար» Հանդիսի:

Изд. лит.-худ. обозрѣнія „Аракс“.







тип. в.д. голпе.

Արտուրին. Ձկնորսների նավահանգիստը ծորոխի ղեռի վերայ:


Рыбачій берегъ на рѣкѣ Чорохѣ.

Автогидія Ангсера въ Вѣнѣ.

Հրատ. «Արար» հանդիսի:

Изд. м.м.-х.жд. обзирѣнія „А.гакез“.





тип. 24. 10118.

Իսրայէլացոց անցնելը Կարմիր ծովից. նկար Այվազովսկի:


И. К. Айвазовскій. — Переходъ израильтянъ черезъ Красное море.

Съ фотографіи Ержемскаго гравировалъ В. Матѣ.

Հրատ «Արարի» Հանդիսի:

Изд. лит.-худ. обзорниія „Аракс“.







ТНН ОА. ГОРПЕ.

Յիսուս և անառակ կինը. նկար Սեմիրադսկի:

Г. И. Семирадскій. — Христосъ и грѣшница.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

Հրատ. «Արարի» Հանդիսի:

Изд. лит.-худ. обозрѣнія „Аракс“.






Նուբիացի գերուհու երգը. նկար Սեմիրադսկին։

Г. Н. Семирадскій. — Пѣснь невольницы.

Автотипия Ангерера въ Вѣнѣ.





Բոկոտն, նկար Վերելալենի:
Верещагинъ. — Чучаръ.




Ձկնորսուհի. նկար Փոն-Բոկ:
Фонъ-Бока. — Рыбачка.
Автотипія Ангерера въ Вѣнѣ.



Նուովմայեցի աղջիկներ. նկար Վերելալենի:
Верещагинъ. — Римскія дѣвочки.








Գիշերը Սև ծովի վերայ. նկար Մահդեանցի:

Յ. Կ. Մաղդեսյանց. — Лунная ночь на Черномъ морѣ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.





707. 22. 10/188.


Ձիւնահալքը Կովկասում, նկար Բաշինդճեանի:

Г. Башинджагіанъ. — Оттепель на Кавказѣ.
Съ фотографіи Ережмскаго. Автотипія Ангерера въ Вѣнѣ.

Հրատ. «Արարատ» Հանդիսի:

Изд. лит.-худ. обозрѣнія „Аракс“.







Զեյբեկի կին. Քանդակորդ ժողովին Պ. Ուկանի:
 Женщина Зейбекъ. Статуэтка скульптора Воскана.
 Автотипія Эд. Гоппе.




THE END OF THE WORLD



Զեյբեկ. Քանդակագործու թիւն Պ. Սեփան:

Зейбекъ. Статуэтка скульптора Воскана.

Автотипія Эд. Гоппе.





Կեանք և Մահ (Պարկայք), նկար գերմանացի նկարիչ Թաւանջ:

Съ картины Тумана. — Жизнь и смерть (Парки).

Автомония Ангелера въ Вѣст.

